

ՂԱՐԱԲԱՂՑԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԸ ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼ ԶԱՑՊԱՆԵԱՆԻՆ



Ֆրանսահայ ազատամարտիկ Սարգիս Հացպանեան

Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի 11 պատգամաւոր, մտաւորականներ, դիմել են Հայաստանի Արդարադատութեան նախարարութեան՝ դարաբաղեան պատերազմի մասնակից Սարգիս Հացպանեանին ներում շնորհելու պահանջով:

Ֆրանսահայ Սարգիս Հացպանեան, որ յայտնի է իր ընդդիմադիր հայեացքներով, սուտ մատնութեան մեղադրանքով դատապարտուած է 3,5 տարի ազատազրկման եւ արդէն 9 ամիսէ կը գտնուի Հայաստանի բանտերուն մէջ:

Մար.ը էջ 4

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ Ո՛Ղ ԴԱՏԱԻԱԶՈՒԹԻՒՆ ԿԱՅ, Ո՛Ղ ԴԱՏԱՐԱՆ» ԶԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԵՍԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ԲՈՂՈՔԻ ՆՈՐ ԱԼԻՔ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ

Հայ Ազգային Գոնկրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան յայտնեց որ Հայաստանի ընդդիմադիր կուսակցութիւնները համախմբող շարժումը բողոքի նոր ալիք պիտի բարձրացնէ ե՛ւ երկրէն ներս, եւ միջազգային ու դիւանագիտական կառույցներու մօտ:

«Փայթեթ ենք պատրաստուած եւ բողոքի նոր ալիք ենք բարձրացնելու ե՛ւ երկրի ներսում, եւ դիւանագիտական, միջազգային կառույցներում, Եւրոպայի խորհրդում», - Օգոստոս 10-ին լրագրողներուն յայտարարեց Լեւոն Զուրաբեան: - «Մենք ամէն ինչ անելու ենք, որպէսզի 21 քաղաքատարկեալները, ինչպէս նաեւ հետախուզման մէջ գտնուողները կարողանան ազատ ապրել իրենց երկրում: Մասնաւորապէս, ցանկանում եմ ընդգծել (հետախուզման մէջ գտնուող Ազգային ժողովի պատգամաւոր) Նաչատուր Սուքիասեանի պարագան»:

Նոսելով վերջերս մեկնարկած՝ ՀԱԳ-ի դեկալարներու մարզային այցելութիւններու մասին՝ Զուրաբեան կրկին յայտնեց, որ անոնց նպատակը, առաջին հերթին,



Լեւոն Տէր-Պետրոսեան Կոտայքի մարզ այցելութեան ժամանակ

թին, տակաւին անազատութեան մէջ գտնուող իրենց ընկերներուն բարոյական աջակցութիւն ցոյց տալն է:

Իսկ այն հարցին, թէ արդեօ՞ք այդ այցելութիւնները նաեւ քարոզարշաւ չէ, եւ արդեօ՞ք ընդդիմութիւնը արտահերթ ընտրութիւններու հեռանկար կը տեսնէ, ՀԱԳ-ի համակարգողը պատասխանեց. - «Ե՛ւ ժողովուրդը, ե՛ւ տեղական կառույցները մեր առջեւ խնդիր են դնում ակտիւացման: Ինչ վերաբերում է արտահերթ ընտրութիւններին, դրանք միակ միջոցն են իշխանութեան լեգիտիմութիւնը վերականգնելու»:

Ի պատասխան այն հարցին, թէ ինչ նկատի ունէր Լեւոն Տէր-Պետրոսեան, երբ օրերս յայտարարեց, թէ աշնան իրավիճակը պիտի փոխուի, Զուրաբեան տուաւ իր անձնական կարծիքը. - «Վստահ եմ, որ Հայաստանը յայտնուել է բազմաթիւ մարտահրաւէրներու առջեւ՝ ներառեալ տնտեսական ճգնաժամը, Ղարաբաղեան խնդրի

կարգաւորման գործընթացը, հայ-թրքական յարաբերութիւնները, Ատրպէյճանի հզօրացումը, եւ ադեկուատ պատասխան ոչ լեգիտիմութիւնները չունեն այդ մարտահրաւէրներին»:

Ան համոզմունք յայտնեց, որ գալիք աշնան «բոլորի համար ակնյայտ է դառնալու այս ռեժիմի լիակատար ձախողումը». - «Այն ճանապարհը, որով այսօր գնում է Հայաստանի Հանրապետութիւնը, դա պարտութեան ճանապարհ է, եւ միայն մէկ ելք կա: չ Դա այն է, որ Հայաստանում ժողովուրդը ոտքի կանգնի»:

«Կարճ ասած՝ լուծումը այս օլիգարխիկ, փչացած, Հայաստանին խեղդող համակարգի վերացման մէջ է: Եւ մենք ամէն ինչ անելու ենք, որ այդ նպատակի իրականացմանը հասնենք», - աւելցուց Լեւոն Զուրաբեան:

Հայ Ազգային Գոնկրէսի ներկայացուցիչները՝ Հայաստանի

Մար.ը էջ 5

ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԵԼԵՆ ԵՏՔ ԱՐՄԱՆ ԲԱԲԱԶԱՆԵԱՆ ՄԵԿՆԵՑԱՒ ԱՐՏԱՍԱՅՄԱՆ՝ ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ



Արման Բարաջանեան բանտէն ազատ արձակուելու պահուն

Աւելի քան երեք տարի անազատութեան մէջ գտնուելէ ետք եւ վերջերս առողջական պատճառներով, մօտ 40 օր կանուխ ազատ արձակուած «Ժամանակ Երեւան» թերթի խմբագիր Արման Բարաջանեան մեկնեցաւ արտասահման ենթարկուելու համար վիրահատութեան:

Նախքան իր մեկնումը Բարաջանեան «Ազատութիւն» ռատիօկայանի տրուած հարցազրոյցի ըն-

թացքին յայտարարեց որ պիտի շարունակէ մնալ քաղաքականութեան մէջ:

«Միարժէք ես մնալու եմ քաղաքականութեան մէջ, վերադառնալու եմ Հայաստան: Կարծում եմ, որ 2006 թուականից յետոյ Հայաստանի խնդիրները աւելի խորացել, աւելի լրջացել են: Եւ այդ արդարութեան դեֆիցիտը, որ ես

Մար.ը էջ 5

ՍԴՅԿ ԱՏԵՆԱՊԵՏԻ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՅԵՏ

Օգոստոս 7-ի երեկոյեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Տիգրան Սարգսեան ընդունած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կենտրոնական վարչութեան ատենապետ Սեդրակ Աճէմեանին:

Կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, հանդիպման ընթացքին կողմերը քննարկած են Հայաստանի տնտեսական զարգացման, գործարար միջավայրի բարելաւման հարցերը ու Հայաստանի տնտեսութեան մէջ Սփիւռքի առաւել լայն ներգրաւման հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ՝ ՍԴԿ-ի հետ երկխօսութեան ու համագործակցութեան հնարաւոր ուղիները:

Անդրադարձ կատարուած է նաեւ համազգային նշանակութիւն ունեցող հիմնախնդիրներուն, մասնաւորապէս՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու Արցախի հիմնահարցի արդարացի կարգաւորման:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԴՅԿ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԼԻԴԻՄԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԵՏ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ»

ՄԱՐԻՆԷ ԽԱՌԱՏԵԱՆ

Լեւոն Տէր Պետրոսեանի գլխաւորութեամբ Կոտայքի մարզի Հրազդան քաղաք ու Վանատուր գիւղ Հայ Ազգային Կոնգրեսի առաջնորդների ու ակտիւստների այցելութեամբ մեկնարկեցին Հայ Ազգային Կոնգրեսի մարզային այցելութիւնները: Նրանց թւում էր նաեւ ՍԴՀԿ ատենապետ Լիւդմիլա Սարգսեանը: Ներկայացնում ենք մեր գրոյցը նրա հետ:

- Գո՞հ էք հրազդանցիներ ընդունելու թիւով:

- Թերեւս այս պահով չէ, որ պիտի գնահատեմ հրազդանցիներին: Նրանք մշտապէս մեր Շարժման առաջամարտիկներն են եղել: Անկոտորում կամքով մինչեւ վերջ մեզ հետ են եւ առ այսօր որեւէ հիմք չի եղել՝ կասկածելու այդ մարդկանց վճռականութեանը, որ նրանց նպատակները միանշանակ ազնիւ են եւ ուղղուած են երկրում սահմանադրական կարգի հաստատմանը: Այսօր առաւել քան գոհ եմ նրանց ընդունելութիւնից, ակտիւութիւնից, նուիրուածութիւնից: Վանատուրում յայտնաբերեցի, որ Սասուն Միջալէւեանի նկատմամբ իշխանութիւնների վարքագիծը Հրազդանում նոր հերոսներ է ծնում: Ես տեսայ այնտեղ պատանիներ, ովքեր վճռականութեամբ լցուած մտածում են՝ ինչպէս պայքարել ուժեղ մի ղեկավար ու կանոն հաստատելու համար:

Վստահ եմ, որ մի քանի տարի յետոյ Սասունի նման տասնեակ հերոս տղաներ կը լինեն հնտեղ: Վանատուրցիների, հրազդանցիների ոգին անկոտորում է, հիացած եմ այդ ժողովրդով:

- Ի՞նչ նպատակ ունեն Կոնգրեսի մարզային այցելութիւնները:



- Նախ՝ մենք պարտաւոր ենք այցելել բանտերում գտնուող մեր հերոս ընկերների ընտանիքներին, ծանօթանալ նրանց հոգեվիճակին եւ սոցիալական վիճակին: Պիտի ասեմ, որ նրանք բոլորը հպարտանում են իրենց հերոսներով, իրենց ամուսիններով, որոնք այսօր ճարտար այն կողմ են: Երկրորդ նպատակը՝ մարդկերի ընդհանուր վիճակի, մարզի ժողովրդի հոգեվիճակի, պրոբլեմների հետ ծանօթանալն էր, նաեւ՝ Կոնգրեսի մարզային գրասենեակները ակտիւացնելը:

- Տիկին Սարգսեան, հնարաւոր է կրկնում է 2007-ի սցենարը, երբ հենց մարզային այցելութիւնները հիմք դրեցին հանրահաւաքային պայքարի կուլմինացիային:

- Ես չեմ ասում, որ 2007 թ. սցենարն է կրկնում, բայց չեմ բացառում, որ կուլմինացիա լինելու է: Երկրում ծանր իրավիճակ է՝ եւ սոցիալական, եւ քաղաքական, եւ որեւէ մէկը չի կարող ասել, թէ վաղը մենք որ երկրում ենք ապրելու, ինչպիսի իրավիճակ կը լինի,

հետեւաբար պէտք է պատրաստ լինել մեր երկրի, պետականութեան շահերը պաշտպանելուն: Իսկ այսօր իրականում այդ շահերը պաշտպանողը Հայ Ազգային Կոնգրեսն է, նրան աջակցող կուսակցութիւններն են եւ իրական ընդդիմութիւնն է:

- Գաղտնիք չէ, որ ժողովրդի մէջ որոշակի ապատիա կայ: Ինչպէ՞ս էք պատրաստուում կրկին «արթնացնել» ժողովրդին:

- Ես չեմ կարծում, որ ժողովուրդը քնած է: Ժողովուրդը կարող է Շարժման ողջ տրամաբանութիւնը չհասկանալ եւ պարտաւոր էլ չէ հասկանալ, որովհետեւ ամէն ինչ չի, որ մատուցում է ժողովրդին, սակայն այդ ամէնը Շարժման ընդհանուր տրամաբանութեան մէջ է: Ես որեւէ ապատիա չեմ տեսնում: Ամենացաւալին այն կը լինի, եթէ ժողովուրդը կորցնի հաւատը ընդդիմութեան նկատմամբ: Ես նման կորուստ չեմ տեսնում, դա կարող է լինել մի պարագայում՝ եթէ մարդիկ սկսեն ողջունել իշխանութիւնների քայլերը: Իսկ դա բացառում է այս պարագայում: Հետեւաբար կը գայ ժամանակը, եւ ժողովուրդը, որ մի պահ հանգիստ է վերցրել, նորից կ'աշխուժանայ եւ մեզ հետ միասին կը շարունակի պայքարը երկրում սահմանադրական կարգ հաստատելու ուղղութեամբ:

- Ասել է եթէ՛ համոզուած էք, որ հնարաւոր է արթնացնել պայքարի ոգին:

- Ես որեւէ խնդիր չեմ տեսնում մեր ժողովրդի հետ: Մեր ժողովուրդը գիտակից ժողովուրդ է, հասկանում է երկրում ստեղծուած վիճակը, որ գործող նախագահը չի տիրապետում իրավիճակին, որ նրան տարբեր պարտադրանքներով ստիպում են քայլեր

կատարել ԼՂ գործընթացում:
- Կոնգրեսի մարզային հանդիպումները շարունակական են լինելու, քաղաքական իրավիճակ փոխելու խնդիր է դրուած:

- Այսօր շատ բան կախուած է երկրից դուրս տեղի ունեցող զարգացումներից: Նայած, թէ ԼՂ հիմնախնդրի լուծման հետ կապուած ինչ իրավիճակ կը ստեղծուի Սեպտեմբերին: Չեմ կարող ասել՝ ինչ հետեւողականութեամբ դա կարող է լինել, բայց մի քանի մարզեր մենք հաստատ պիտի այցելենք եւ դրանից յետոյ արդէն կ'որոշենք, թէ ինչ ձեւով շարունակենք մեր այցելութիւնները: Դա արդէն յետագայի խնդիր է:

- Տեղեկութիւններ կան, որ Օգոստոսին հնարաւոր է արտահերթ հանրահաւաք լինի՝ ԼՂ գործընթացի զարգացումների առթիւ...

- Ես չեմ հաստատում այդ տեղեկութիւնը, բայց նաեւ՝ չեմ բացառում: Ամէն ինչ կախուած է իրավիճակից: Ոչ ոք չի կարող ասել, թէ վաղը մենք ինչ երկրում կ'արթնանաք եւ ինչ իրավիճակ կը լինի: Պատրաստ պիտի լինենք ճիշտ արձագանքելու իւրաքանչիւր իրավիճակին եւ կարողանանք կազմակերպել ժողովրդին, եթէ դրան հրաժեշտութիւնը լինի:

- Իսկ Սեպտեմբերի 18-ը ի՞նչ է սպասում: Ընդհանրապէս Սեպտեմբերի 18-ը սկիզբ լինելու է ինչ-որ գործընթացի:

- Կարող ենք նաեւ հղպէս համարել: Ամէն ղէպքում՝ աշունը թեժ է լինելու:

- Քաղաքական նոր փուլ է սկսւում:

- Կարծում եմ՝ այո:

«ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹ

ԵՐԲ ՊԻՏԻ ԳԱՅ ՍԹԱՓԵԼՈՒ ԺԱՍԸ

Ա.ԱՐՄԻՆ ՇԻՐՏՆՎԵԱՆ

Հայաստանի արտաքին քաղաքականութեան դրոյթներուն մէջ, ներկայ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ փոխյարաբերութիւնները չունեցան համահունչ եւ յստակ սահմանում: Ներկայ Հայաստան ըսելով, նկատի ունինք խորհրդային Միութեան փլուզումին հետեւանքով ծնած ազատ, անկախ եւ գերիշխան հայրենի պետականութիւնը: Հայրենի յաջորդական իշխանութիւններ, Հայաստան-Թուրքիա փոխյարաբերութիւնները չփոթեցին հայ-թուրք յարաբերութիւններու հետ, առաջին իսկ օրէն անտեսեցին սփիւռքահայութեան գործօնը, «մոռցան» այն հանգամանքը, թէ տարազիր հայութիւնն է իրաւական տէրը Արեւմտահայաստանի բռնազրաւեալ հողերուն, իսկ պետականութիւնը՝ Յեղասպանութեան ճանաչման իրաւատէրը: Հայրենի յաջորդական իշխանութիւնները չաւարեցան պետական լծակներու ազդեցութեամբ աստիճանաբար անտեսել ու նսեմացնել իրաւատէր սփիւռքահայութեան հայցն ու միջազգային ամպիոններու վրայ Հայկական Յեղասպանութեան ճանաչման ու հատուցման ուղղութեամբ անոր կատարած երկարամեայ աշխատանքը:

Սխալ մեկնաբանութիւններ շատ ուղղուեցան Սփիւռքի հասցէ-

ին: Մինչեւ օրս ալ հայկական պահանջատիրութեան մասին կը շարունակուին տրուիլ տարբեր մեկնաբանութիւններ: Հայրենի մամուլին մէջ շատ յաճախ հայկական հարցին պահանջատիրութիւնը եւ ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ Սփիւռքի բանեցուցած ճիգերը կը դիտարկուին իբրեւ զգացական ռոմանթիք երեւոյթներ: Մէկուկէս միլիոն հաշուող մարդկային ռեւէ զանգուածի հաշուէյարդարը հետապնդելու, ցեղասպանին յանցագործութիւնը դատապարտելու, պատմութեան ժխտումը բացառելու նուիրական աշխատանքը, իրմէ բռնագրաւուած հողերը պահանջող ժողովուրդի մը արդար կանչը զգացական պոթիկում եւ կամ ռոմանթիզմի արտայայտութիւն մեկնաբանելու դիտաւորութիւնը առնուազան բարոյականութիւն է: Հայաստանի մէջ, այսօր ունենալով հատուածական, կամ իշխանատնազական հաշիւներէ մղուած կը դատապարտեն գործող իշխանութիւններու եւ Թուրքիոյ միջեւ մերձեցումի փորձերը: Բայց, որքան ուրախալի պիտի ըլլար, որ ազգովին նախ՝ դատապարտուէր՝ այն տրամաբանութիւնը, որ տասնամեակէ մը աւելի գաղտնի բանակցութիւններ վարելէ ետք անցնող 22 Ապրիլին ի լուր աշխարհին, բացառապատեցաւ հայ-թուրքական փլաթֆորմի մը գոյութիւնը: Հասկցողութեան փլաթ-

ֆորմ մը, որ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութիւնը կարգաւորելու նպատակաւ յայտարարուած Մատրիտեան փլաթֆորմին նման կը մնայ անորոշ: Վերջինիս կէտերը լոյս տեսան մամուլի էջերով, իսկ հայ-թուրքական համաձայնութեան փլաթֆորմը մինչեւ օրս յստակ չէ, թէ ո՞ր կէտերուն շուրջ գոյացած էր համաձայնութիւնը, ե՞րբ, որո՞նց միջեւ եւ ինչպէ՞ս:

Թրքական մամուլը հրապարակեց համաձայնութեան կէտերը, իսկ Հայաստան միայն հերքեց...: Բայց որեւէ յստակ լուսաբանութիւն չկատարեց:

Հայաստանի մէջ այսօր առկայ են ընկերային, տնտեսական, քաղաքական բազմաթիւ հարցեր, երեւոյթներ որոնց մասին քաղաքացին առ հասարակ չունի գաղափար, կամ պատկերացում: Դժբախտաբար, կը պարզուի, որ ազգային նշանակութիւն ներկայացնող Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու եւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման մասին նոյնպէս պատկերացում չունի հայրենի ժողովուրդը: Այս մէկը զարմանալի չէ, որովհետեւ, պետականութեան օղակներու մօտ անգամ յստակ պատկերացում կը բացակայի ոչ միայն Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն շուրջ, այլեւ՝ Լեւոնային Ղարաբաղի կար-

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹ-ՕՐԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄՍՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՅՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍՏԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԿՈՉ Է ԱՐԻՈՒՄ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ «ՐԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ ԿԱԼԱՆԱԴՐՈՒՄԻ ԽՄԲԱԳՐԻՆ

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանին ազատ արձակելու պահանջին արդեն միացել են 84 լրագրողներ եւ հասարակական գործիչներ:

Տարածած յայտարարութեամբ նրանք անհանգստութիւն են յայտնել լրագրողի նկատմամբ ցուցաբերուած խտրական վերաբերմունքի առիթով՝ պահանջելով փոխել Փաշինյանի իսափանման միջոցը: Նիկոլ Փաշինյանը Յուլիսի 1-ին կամովին ներկայացաւ իրաւապահներին եւ անմիջապէս կալանաւորուեց:

«Առաւօտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամեանը, մեկնաբանելով այս յայտարարութիւնը, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում, մասնաւորապէս, ասաց. - «Ես ստորագրել եմ, որովհետեւ կարծում եմ, որ անմեղ մարդիկ չպիտի նստեն բանտում, անկախ այն բանից, թէ ինչ հայեացքներ են նրանք դաւանում: Եւ երկրորդը՝ եթէ մարդը եկել է եւ ներկայացել է իշխանութիւններին, ապա քննչական մարմինների այն պնդումը, թէ իբր նա ինչ-որ խոչընդոտներ կը յարուցի քննութեան համար՝ լինելով ազատութեան մէջ, ինձ անհեթեթ պատճառաբանութիւն է թւում»:

Յայտարարութեան տակ ստորագրած լրագրողները եւ հասարա-



«Հայկական ժամանակ»-ի խմբագիր Նիկոլ Փաշինյան

կական գործիչները պատրաստակամութիւն են յայտնել օրէնքով սահմանուած կարգով հանդէս գալ որպէս երաշխաւոր՝ Նիկոլ Փաշինյանին ազատ արձակելու հարցում, «քանզի իսափանման միջոցի փոփոխութիւնը կը դիտարկուի որպէս յարգանք ազատ խօսքի եւ քաղաքական ընդդիմախօսների նկատմամբ»:

«ԱՄ Նոյրիկ» նախագահ Տիգրան Կարապետեանը, ով նույնպէս միացել է յայտարարութեանը, ասաց. - «Լրագրողները ընդհանրապէս չպետք է լինեն մեկուսացուած՝ մասնաւոր քաղաքական հարցերով... մասնաւոր երբ իրենք վերադառնում են եւ ցանկանում են նոր էջից սկսել, հաւատում են իշխանութիւնների կոչին, որ համաներում է, եւ վերադառնում են: Դա մեծ, խիզախ քայլ է, եւ ես չեմ մտածում, որ այդպիսի աւարտ պետք է ունենար այդ քայլը»:

ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՈՒԵԼ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԵՂԱԴՐՈՒՈՂ ԶԳԻ ԱՆԴԱՄԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Հայաստանի ոստիկանութեան հասարակացուածութեան հետ կապերի վարչութեան պետ Սայաթ Շիրինեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում՝ հաստատեց, որ համաներմամբ ազատ է արձակուել Երեւանի աւազանու ընտրութիւններում Հայաստանի հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) նախընտրական ցուցակի 43-րդ հորիզոնականը զբաղեցնող Արթուր Սեդրակեանը, ով ձերբակալուել էր կուսակցական ընկերջ Կարէն Յակոբեանի սպանութեան առնչութեամբ:

Սպանութիւնը տեղի էր ունեցել Ապրիլի 3-ին: Պաշտօնական տուեալներով, Սեդրակեանը կրակել էր Յակոբեանի վրայ, որը հրազէնային վնասուածքներով տեղափոխ-

ուել էր հիւանդանոց եւ, գիտակցութեան չզալով, մահացել: Որոշ վարկածներում սպանութեան ելքով այս «ուզեցորկան» կապուած էր աւազանու ընտրութիւնների հետ:

Փաստի առիթով ի սկզբանէ յարուցուել էր քրէական գործ՝ սպանութեան յօդուածի յատկանիշներով, սակայն, ըստ Սայաթ Շիրինեանի, նախաքննութեան ընթացքում 104-րդ յօդուածով առաջադրուած մեղադրանքը վերադարձուել է 116-րդ յօդուածով. այն է՝ անհրաժեշտ պաշտպանութեան սահմանազանցութիւն, եւ Արթուր Սեդրակեանի վրայ համաներումը տարածուել է: Այսինքն՝ նախաքննական մարմինը եզրակացրել է, որ սպանութիւնը կրել է ինքնապաշտպանական դրդապատճառներ:

ԿԱԼԱՆԱԿԱՅՐԵՐՈՒՄ ԶԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՔԱՂԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ

«TERT.AM»: Օգոստոս 11-ին քաղաքատարկեալների խնդիրներին նուիրուած մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձ է եղել նաեւ լրատուամիջոցների ներկայացուցիչներին:

«Քաղքանտարկեալների ազատ արձակման գործում մենք ձեզ ընկալում ենք որպէս գործընկերներ, բայց իշխանութիւններն էլ ձեզ ընկալում են որպէս մեզ յանցակից», - յայտարարել է ՀՀ քաղքանտարկեալների եւ հայածեալների պաշտպանութեան կոմիտէի ներկայացուցիչ Կարապետ Ռուբինեանը՝ դիմելով լրագրողներին:

Վերջինս պատմել է, թէ ինչպիսի տանջանքներից յետոյ ազատ արձակեցին «ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արման

Բաբաջանեանին՝ որակելով նրա նկատմամբ կիրառուածը որպէս անմարդկային դրսեւորում, որը «տեղի ունեցաւ բոլորիս աչքի առջեւ»:

Խօսելով նաեւ համաներման թերիութեան մասին՝ Կարապետ Ռուբինեանը այն անուանեց խեղկատակութիւն:

Քաղքանտարկեալների կոմիտէի մէկ այլ ներկայացուցիչ՝ Վարդգէս Գասպարին տեղեկացրեց ՔԿՀ-ներում տեղի ունեցող ճնշումների եւ բռնութիւնների մասին: Նրա խօսքով՝ աւազակապետութիւնն ասուածը ինքը լաւ հասկացաւ կալանավայրում, քանի որ աւազակապետութեան յանցագործ գործակալ-

Շաք.ը էջ 4

ՍՓԻՌՔԱՅԱՅ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԸ ՊԱՐՊԱՆՈՒՄ ԵՆ ԶԱՅԿԱԿԱՆ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆԸ

Ըստ նախնական տուեալներէ, 2009 թուականի առաջին կիսամեակում անցեալ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ Հայաստան այցելող զբօսաշրջիկների հոսքն աւելացել է 0,1%-ով: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտնել է հանրապետութեան էկոնոմիկայի նախարարութեանն առընթեր զբօսաշրջութեան վարչութեան պետ Մելիսայ Ապրեսեանը:

Նա նաեւ նշել է, որ եւրոպական շատ պետութիւններում՝ ներառեալ զբօսաշրջիկների յաճախելիութեամբ առաջատար Ֆրանսիան, արդէն զգալի անկում է դիտուում: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, ըստ Ապրեսեանի, շարժը չի իջնում զրոյցական թուից մի քանի պատճառներով: Առաջին հերթին, դա տնտեսութեան ինչպէս պետական, այնպէս էլ մասնաւոր հատուածի բարելաւմանն ուղղուած պետական քաղաքականութիւնն է, ինչպէս նաեւ Հայաստանում բիզնեսի ակտիվ վարման գործօնը:

Հայաստանում զբօսաշրջութեան զարգացման գործում հսկայական դեր է կատարում նաեւ հայկական սփիւռքը, որը ապահովում է ժամանողների ամբողջ հոսքի միջինը մինչեւ 60%-ը, - նշել է վարչութեան պետը: Սփիւռքը, ըստ նրա, բազմիցս ֆինանսաւորել է

երկրի տնտեսական ոլորտների աշխուժացմանն ուղղուած շատ նախագծեր, որոնց շարքում է նաեւ զբօսաշրջութիւնը: «Ներկայ դրութեամբ, չնայած ֆինանսական համաշխարհային ճգնաժամին, հայկական սփիւռքի բազմաթիւ ներկայացուցիչներ միեւնոյն է գալիս են Հայաստան որպէս զբօսաշրջիկներ, ինչի շնորհիւ էլ բիզնեսի այս տեսակը մնում է պլյուսով», - յայտնել է Ապրեսեանը:

Հայաստան ժամանող զբօսաշրջիկների մեծ մասը միջին տարիքից բարձր մարդիկ են, որոնց միջոցներն այնքան էլ սահմանափակ չեն, քանի որ կենսաթոշակ ու նպաստ են ստանում իրենց երկրներում: Ըստ Ապրեսեանի, դա նպատակային շահաւէտ խումբ է, քանի որ կողմնորոշուած է պատմամշակութային յուշարձանների այցելութեան վրայ, որոնցով այդքան հարուստ է Հայաստանը:

Ապրեսեանի տուեալներով, վերջին տարւոյն երկրի ընթացքում Հայաստան այցելող զբօսաշրջիկների հոսքը աճել է աւելի քան 11 անգամ: 2000 թուականին զբօսաշրջիկների թիւը կազմում էր 45 հազար, իսկ 2008-ին այն հասել է 558 հազարի: Զբօսաշրջիկների ակտիվութեան կտրուկ աճ՝ մօտ երեք անգամ, արձանագրուեց 2001 թուականին, երբ Հայաստանը նշում էր քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակը:

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐԵԱՆ. »ՐԱՐԿԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԸ ԽՈՇՈՐ ԲԻԶՆԵՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՈՒՇԵՂԱՆԱԼՈՒ Է

Տարուայ երկրորդ կէսին հարկային ճնշումը խոշոր բիզնեսի նկատմամբ ուժեղանալու է: Զորեքաբեր «Ազատութիւն» ռադիոկայանի հետ ունեցած զրոյցի ընթացքում նման կանխատեսում կատարեց Ազգային ժողովի նախագահի խորհրդական, տնտեսագէտ Թաթուլ Մանասերեանը:

Ըստ Մանասերեանի, եթէ Հայաստանի հարկային մարմինները նպատակ են դրել 2009-ի երկրորդ կիսամեակում աւելացնել հաւաքուող հարկերի չափը, ապա նրանք այլ տարբերակ չունեն, քան խոշոր բիզնեսի դաշտ մտնելն է, որովհետեւ փոքր ու միջին բիզնեսի ոլորտում հարկերի հաւաքագրման մակարդակը արդեն իսկ մօտեցել է անթոյլատրելի սահմանագծին:

«Դեռեւս մենք չենք կարողացել մօտենալ խոշոր բիզնեսին: Խոշոր բիզնեսը մեծ մասամբ հրաժարուած է պատշաճ փաստաթղթեր ներկայացնելուց: Սա նշանակում է հարկման դաշտից խուսափել», - ասաց Մանասերեանը:

Մինչդեռ, անկախ փորձագէտ Սամուէլ Աւագեանը կասկածում է, որ Հայաստանի հարկային մարմինները կը կարողանան տարուայ երկրորդ կէսին աւելացնել խոշոր բիզնեսից գանձուող հարկերը:

«Այն, որ Հայաստանի հարկային մարմինները կարողացան այս տարուայ առաջին կիսամեակում գերակատարել խոշոր բիզնեսից գանձուող հարկերի հաւաքագրումը, դա պայմանաւորուած է նրանով, որ խոշոր բիզնեսը հարկ էր մուծում դեռ անցած տարի ստացուած իր շահոյթից, իսկ այս տարի այդ շահոյթը նուազելու է՝ երկնիչ տնտեսական անկման պատ-

ճառով», - ասում է փորձագէտը:

Այս ամէնի ֆոնին կրկին արդիական է դառնում դեռեւս գարնանը կառավարութեան կողմից Ազգային ժողովի հաւանութեանը ներկայացրած հարկային փաթեթի ճակատագիրը, որի համաձայն նախատեսուած էր, որ հարկային մարմինների մշտական ներկայացուցիչներ ունենալ Հայաստանի խոշոր ընկերութիւններում, որպէսզի այդ կերպ պարզեն, թէ տուեալ ձեռնարկութիւնը ինչքան ապրանք է գնել կամ վաճառել, ինչ է արտադրել, ինչ ծառայութիւն է մատուցել, այդ բոլորը ինչ գնելով եւ այլն: Գարնանը Ազգային ժողովը, ուր, զգալի թիւ են կազմում խոշոր գործարարները, դէմ դուրս եկաւ այդ օրինագծի ընդունմանը:

Պետեկամուտների կոմիտէի նախագահի տեղակալ Արմէն Ալավերդեանը, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում չբացառեց, որ աշնանը կրկին Ազգային ժողովին ներկայացուելիք հարկային բարեփոխումների օրէնսդրական փաթեթում կը բացակայի հարկային մշտական ներկայացուցչի վերաբերեալ առաջարկութիւնը:

«Ես չեմ բացառում, որ հարկային տեսուչների ֆիզիկական ներկայութիւն հասկացութիւնը ձեւափոխուի հսկողութեան այլ տարբերակով, ինչը կարելի է անուանել տեղեկատուական հսկողութիւն: Այսինքն, եթէ ֆիզիկապէս չեն գնում խոշոր հարկ վճարողի մօտ, շատ լաւ, թող խոշոր հարկ վճարողը ինքը բաւարար քանակի տեղեկութիւններ տա հարկային մարմինն ապրանքների քանակի եւ գների վերաբերեալ»:

ԼՈՒՐԵՐ

ՎԻՏԱԼԻ ԲԱԼԱՍԱՆԵԱՆ.

«ՂԱՐԱԲԱՂՆ Է ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ՊԱՐՏԱԴՐԵԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ»

«TERT.AM»: Ղարաբաղեան հակամարտութեան գոտում հաւասարակշռութիւնը պահպանում է Լեւոնային Ղարաբաղի Պաշտպանական բանակը, եւ ունէ խաղաղարար չպէտք է ուտք դնի հակամարտութեան գոտի: Լեւոնային Ղարաբաղի Ազգային ժողովի պատգամաւոր, ԼՂՀ պաշտպանութեան նախկին փոխնախարար, գեներալ-մայոր Վիտալի Բալասանեանը NEWS.am-ի խնդրանքով մեկնաբանելով Ղարաբաղ-ադրբեջանական շփման գոտի միջազգային խաղաղարարներին տեղակայման հնարաւորութիւնն ու անհրաժեշտութիւնը, նշեց, որ ժամանակ առ ժամանակ միջազգային հանրութեան տարբեր ներկայացուցիչներին կողմից լինում են նմանատիպ յայտարարութիւններ, եւ, «ինչու չէ, շշուկներով տեղեակ են պահում հանրութեանն, իբր խաղաղարար ուժերի մասին»: «Կ'ստանէ հետեւեալը, մեզ մօտ ֆիքսուած է Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտութիւն: Չկայ Հայաստան-Ատրպէյճան հակամարտութիւն, եւ Ղարաբաղը մտել է պատերազմի մէջ՝ պարտադրուած: Այսինքն, Ադրբեջանի խորհրդային Հանրապետութիւնը պատերազմ է սկսել Լեւոնային Ղարաբաղի դէմ, որի բնակիչներն այն ժամանակ հանդիսանում էին իր քաղաքացիները: Յաջորդ պատերազմը սկսուել է 1989թ., երբ ԼՂԻՄ-ն ունէր յատուկ կարգավիճակ, եւ ենթարկուած էր ուղիղ կրեմլին: 1991թ. անկախութիւնից յետոյ Ատրպէյճանը շարունակեց լայնամասշտաբ պատերազմը ԼՂ-ի դէմ: Այսինքն, Ադրբեջանը երեք անգամ պատերազմել է Լեւոնային Ղարաբաղի



Վիտալի Բալասանեան

Հանրապետութեան դէմ, որը պատերազմում էր որպէս պարտադրուած կողմ», - մանրամասնեց Բալասանեանը եւ նկատեց, որ միջազգային հանրութիւնն առ այսօր չի արձանագրել եւ չի տուել համապատասխան գնահատական պատերազմ նախաձեռնողին:

Խաղաղարարներին տեղակայման անհրաժեշտութեանն էլ անդրադառնալով՝ հրամանատարը յիշեցրեց, որ ԽՍՀՄ ժամանակ էլ խաղաղարար զօրք էր տեղակայուած, որն էլ իրականացրեց «կոլցօ» օպերացիան: «Խաղաղարար ուժերի առաքելութիւնը որեւիցէ երկրում իրեն չի արդարացրել: Խաղաղարարներին միջոցով գերտէրութիւնները պարտադրում են իրենց ցանկութիւնը: 1994թ. հրադադարի ստորագրումից յետոյ, երբ խաղաղութիւնը պարտադրուեց ԼՂ պաշտպանական ուժերի կողմից, առ այսօր հաւասարակշռութիւնը պահպանուած է դրա հետեւանքով: Որեւէ խաղաղարար չպէտք է մուտք գործի: Եւ դա միայն իմ կարծիքը չէ, ժողովրդի մեծամասնութեան կարծիքն է, - ասաց ԼՂՀ ԱԺ պատգամաւորը:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄԻՋԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ ԲԱԻԱԿԱՆ ՍԵՐՏ Է»

Թրքական հասարակութեան մէջ ուռնները նոյնպէս ընկալուած են որպէս խորթ եւ թշնամու կերպարով: Սակայն, եթէ թուրք-ուսական տնտեսական եւ այլ տիպի համագործակցութիւնը երկուստեք ձեռնտու լինի, ապա որեւէ հիմք չունենք կասկածելու, թէ այդ համագործակցութիւնը չի լինի, - «Փաստարկ» մամուլի ակումբում ասել է թուրքագէտ Ռուբէն Մելքոնեանը:



Թուրքագէտ Ռուբէն Մելքոնեան

զօրու է որեւէ դեր ունենալ, որի մէջ Թուրքիան, բարեբախտաբար, չկայ: Ռուս-թուրքական մերձեցումը չեմ ուզում կապել Ղարաբաղեան հարցի հետ, քանի որ նա «դե-ժուրէ» որեւէ ազդեցութիւն չունի բանակցութիւններում:

Անդրադառնալով Թուրքիայում նոր ատոմակայանի կառուցմանը՝ բանախօսն ասել է, թէ այն կարող է մրցակցութիւն առաջացնել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ. «Քանի որ մեր «փոքր» տարածաշրջանում ատոմակայանի հիմնական մենաշնորհը Հայաստանին է պատկանում, ապա դա կարող է մենաշնորհին հարուածել: Սակայն հայկական տնտեսութիւնը եւ Հայաստանը պէտք է պատրաստ լինեն մրցակցութեան»:

Ինչ վերաբերում է նրան, թէ ուս-թուրքական մերձեցումն ինչ ազդեցութիւն կարող է ունենալ Հայաստանի վրայ, ապա, թուրքագէտի կարծիքով, մենք պէտք է կարողանանք ճիշդ կողմնորոշուել եւ, որպէս անկախ պետութիւն, նոր ստեղծուելիք իրավիճակում ունենանք մեր դիրքը:

Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ տնտեսական մերձեցումը բաւական սերտ է: Սա եւս մէկ նոր մարտահրաւէր է եւ զգօնութեան ազդակ կարող է լինել հայ քաղաքական մտքի համար, - ասելացրել է բանախօսը:

«Հնարաւոր է, որ վերոնշեալ մերձեցումն ինչ-որ հետեւանքներ ունենայ արցախեան հիմնախնդրի կարգաւորման վրայ հարցին Ռ. Մելքոնեանը պատասխանել է.

- Իրաւական տեսանկիւնից Ղարաբաղեան հակամարտութեան արդիւնաւէտ լուծում ունենալու հարցում ԵԱՀԿ Մինսկի խումբն ի

ԲՐԱՅՉԱՅԻ ԱՆԼՐՁՈՒԹԵԱՆ ՄԵՁ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԿԱՅ

«Դա ուղղակի Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան ամբողջ տարածքի կորուստների ծրագիր է, որն անընդունելի է: Ես վստահ եմ դրան դէմ է լինելու Արցախի բնակչութիւնը: Չեմ կարծում, որ այդ ծրագիրը Հայաստանի իշխանութեան կամ ժողովրդի համար ձեռնտու կարող է լինել», - մեկնաբանելով ԵԱՀԿ ամերիկացի համանախագահ Մեթիւ Բրայզայի նախանշած ծրագիրը, յայտարարեց քաղաքագէտ Լեւոն Մելիք-Շահնազարեանը:



ԵԱՀԿ ամերիկացի համաճեղախոս Մեթիւ Բրայզա

Նկատենք, որ Ծաղկաձորում կազմակերպուած երիտասարդական համաժողովում ելույթ ունենալով Մեթիւ Բրայզան նախանշել է Ղարաբաղեան հիմնախնդրի լուծման ուղիները: Ամերիկացի համանախագահի խօսքով, կարգաւորման քայլերի հերթականութիւնը հետեւեալն է՝ փախստականների վերադարձ, սկզբում 5, այնուհետեւ եւս երկու շրջանների վերադարձ Ադրբեջանին, Ղարաբաղի կարգավիճակի վերաբերեալ հանրաքուէ, խաղաղապահ ուժերի տեղակայում, Հայաստանի ու Ղարաբաղի միջեւ միջանցք եւ տարանցիկ ճանապարհներ:

«Հարցի կարգաւորումը հնարաւոր է ազգերի ինքնորոշման, տարածքային ամբողջականութեան եւ ուժի չկիրառման սկզբունքների հիման վրայ: Առաջին հայեացքից սա կարող է հակասող թուալ, բայց կողմերը կարողացել են բանաձեւ գտնել, որն արտայայտուած է 2007-ին ընդունուած եւ վերջերս նորացուած Մադրիդեան սկզբունքներում: Ադրբեջանցի փախստականների վերադարձից յետոյ պէտք է հանրաքուէ տեղի ունենայ, ԽՍՀՄ վերջին մարդահամարի համաձայն, որի բնակչութեան 65 տոկոսը հայեր են, 22 տոկոսն ադրբեջանցիներ: Հանրաքուէի անցկացման ժամկէտը պէտք է ճշդեն Հայաստանի եւ

Ադրբեջանի նախագահները», - ասել է Բրայզան:

Քաղաքագէտի նշումով, անորոշ է մասնաւորապէս, հանրաքուէի անցկացման ժամկէտը: «Չգիտես երբ, ինչ է արուելու», - նկատեց նա:

Լեւոն Մելիք-Շահնազարեանից հետաքրքրուեցինք, թէ ինչի՞ հիման վրայ է Բրայզան նման յայտարարութիւն արել եւ ներկայացրել գործընթացի հերթականութիւնը:

«Բրայզան անընդհատ նման յայտարարութիւններ է անում, որոնք իրականութիւնից դուրս են, որն անլուրջ է: Սակայն այդ անլուրջութեան մէջ կա խորամանկութիւն՝ նա ստուգում է՝ ինչպէս կ'ընդունի հայկական կողմը այդ յայտարարութիւնները: Ինձ թւում է՝ մերժողական պատասխանը նա պէտք է ստանայ ամէն անգամ ու շատ կտրուկ, որովհետեւ սա փորձական քար է եւ պէտք է ամէն անգամ չլարել, չզլանալ ու պատասխանել», - պատասխանեց քաղաքագէտը:

Ի՞նչ կը լինի, երբ ԵԱՀԿ Մինսկի ամերիկացի համանախագահ Բրայզան փոխուի, մանաւանդ, որ արդէն իսկ լուրեր կան նրա փոփոխութեան մասին:

«Հիմնական քաղաքականութեան մէջ ոչինչ չի փոխուելու, որովհետեւ Բրայզան ներկայացնում է ԱՄՆ քաղաքականութիւնը: Սակայն հնարաւոր է ասել ընդգծ-

ԹՈՒՐԹԻԱՆ ԿԵՐԱՅԱՍՏԱՏՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՐԵԼԱԲԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն կիրակի օրը թուրքական «Կանալ 7» մասնաւոր հեռուստաընկերութեանը տուած հարցազրոյցում ասել է, որ Թուրքիան վճռական է տրամադրուած Հայաստանի հետ յարաբերութիւնները բարելաւելու հարցում:

Դավութօղլուն ասել է, թէ Կովկասում Թուրքիայի քաղաքականութեան հեռանկարն է՝ բարելաւել յարաբերութիւնները Թուրքիայի ու Հայաստանի միջեւ, ինչպէս նաեւ նորմալացնել յարաբերութիւնները Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ: Նա յայտարարել է, որ Թուրքիան վճռական է Հայաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու հարցում եւ յայտնել է, որ բանակցութիւնները ընթացքի մէջ են:

ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ ՔԱՂԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ

Շարունակուած էջ 3-էն

ները բանտերում փորձում են ճնշել քաղաքատարկեաներին, որ նրանք հետ կանգնեն իրենց զաղափարներին:

Գասպարիի խօսքով՝ նորեկ կալանաւորը, մտնելով այդ մասրացի մէջ, դառնում է կատարեալ յանցագործ: Վերջինս նաեւ նշեց, որ ճնշումներ սովորական կալանա-

ւորների նակամամբ եւս իրականացուած են:

«Գործող իշխանութիւնը ձեւացնում է, թէ տեղեակ չէ կալանավարերում տեղի ունեցող բռնութիւններից, սակայն իմ կարծիքով իշխանութիւնները քրէական յանցագործներին հետ հաշուեյարդար են իրականացնում քաղաքատարկեալների նկատմամբ», - յաւելեց Վարդգէս Գասպարին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼԻԲԱՆԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԽՈՐՀԱԿԱՆ ՊԼՈՔԸ ԿԸ ԿԵՐԱՅԱՍՏԱՏԷ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԻՐ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ



Հայկական Համախոհական երեսփոխանական Պլոքի անդամներ Ընկեր Սեպուհ Գալստյան, Մեթր Սերժ Թուրսարգիսեան, Ժան Օղասապեան եւ Շանթ Չինչինեան՝ երէկ առաւօտեան գումարեցին ընթացիկ նիստ մը, որուն ընթացքին քննարկեցին ներլիբանանեան բեմին վերջին գարգացումները: Նիստին աւարտին, հրապարակուեցաւ հաղորդագրութիւն մը, որուն մէջ Հայկական Համախոհական Պլոքը նշեց, թէ Լիբանան կը բոլորէ ներքին եւ շրջանային զգայուն հանգրուան մը: Պլոքը դիտել տուաւ, որ Լիբանանի դէմ իսրայէլեան սպառնալիքները հետզհետէ կը սաստկանան: Հայ երեսփոխանները լիբանանցիներուն կողմէն լրջօրէն օժանդակել ապահովական կայունութեան եւ պետականութեան ամրապնդման գործընթացին, ինչպէս նաեւ ազգային միասնականութեան կառավարութիւն ստեղծելու ճիգերուն, որ կրնայ ժողովուրդին բոլորած ընկերային, տնտեսական եւ ապրուստային դժուարութիւնները յաղթահարելու լուծումներէն մէկը դառնալ:

Հայկական Համախոհական Պլոքը՝ կառավարութեան կազմութեան առջեւ խոչընդոտները վերացնելու կողմէն կը վերահաստատեց նշանակեալ վարչապետ Սասնա Հարիւրիի նկատմամբ արտաքստած իր վստահութիւնը: Հայկական Համախոհական Պլոքը միաժամանակ Լիբանանի անկախութեան ոգին վար պահելու կողմէն լրջօրէն լիբանանցիներուն, չիշեցնելով՝ անկախութեան եւ ազատութեան ամրապնդման գործընթացը հետապնդելու ընթացին իրագործումը աշխատանքները:

Այլ գիծի վրայ, Հայկական Համախոհական Պլոքը հաստատեց, որ կենսոլորտի նախարարութեան եւ միջազգային կազմակերպութիւններու հետ համագործակցաբար կը շարունակէ Պուրճ համուտի աղբանոցին հարցին բարուք լուծում մը գտնելու իր ճիգերը, որպէսզի շրջանի բնակիչները ձեռքազատուին կենսոլորտային ապականած մթնոլորտէն, աղբանոցին փոխարէն կառուցելու հանրային պարտէզներ եւ զբօսաշրջալուծութեան վայրեր:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԵԱԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ԲՈՂՈՔԻ ՆՈՐ ԱԼԻՔ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ

Շարունակուած էջ 1-էն

առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորութեամբ, Շաբաթ օրը այցելած էին Լոռու մարզ:

«Ազատութիւն» ռատիոկայանի այն հարցի, թէ ինչպէ՞ս կը վերաբերի Լոռու մարզի դատախազութեան՝ կոռուպցիայի դէմ պայքարի ակտիւ աշխատանքին, երբ անցեալ կէս տարուայ ընթացքին տարբեր քրէական գործեր յարուցուած են համայնքներու դեկավարներու կամ ալ միջին օղակի պաշտօնեաներու դէմ, Լեւոն Տէր-

Պետրոսեանի պատասխանը եղած է, «Կոռուպցիայի դէմ պայքարում են կոռուպցիայի պարագլուխները: Մեծագոյն աւազակապետները իրենք փոքրիկ օրինակները իբրեւ թէ կարգի են հրահրում եւ ժողովուրդին ցոյց են տալիս, որ կոռուպցիայի դէմ են պայքարում»:

«Հայաստանում ո՛չ դատախազութիւն կայ, ո՛չ դատարան կայ: Այդ ինստիտուտների աստուածը պէտք է լինէր օրէնքը, նրանց աստուածը իրենց անմիջական վերադասն է», - յայտարարեց առաջին նախագահը:

ԱՐՄԱՆ ԲԱԲԱԶԱՆԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

այս մէկ շաբաթուայ ընթացքում նշմարում եմ Հայաստանում, հայ ժողովրդի, մեր քաղաքացիների մօտ, կարծում եմ, լրջագոյն աշխատանք է ենթադրում: Պատրաստուած եմ թէ՛ քաղաքական ասպարէզում, թէ՛ լրագրական իմ ծառայութիւնները բերել»:

Ան շեշտեց, որ իր քաղաքական գործունէութիւնը պիտի ծաւալէ Հայ Ազգային Գոնկրէսի քաղաքական ծրագրերու շրջագիծէն ներս:

Յայտնելով, թէ չի պատրաստուիր անդամակցելու որեւէ քաղա-

ՄԵԿՆԵՑԱԻ ԱՐՏԱՍԱՐՄԱՆ

քական ուժի, Բաբաջանեան ըսաւ. - «Ես կը լինեմ Հայ Ազգային Գոնկրէսի կողքին եւ թերթը [«Ժամանակ Երեւան»] նոյնպէս կը ծառայեցնեմ Հայ Ազգային Գոնկրէսի նպատակներին»:

Հարցին, թէ ինք իրեն քաղաքական բանտարկեալ կը նկատէ՞, Բաբաջանեան պատասխանեց. - «Ես գտնում եմ, որ ես ենթարկուել եմ քաղաքական հետապնդման եւ ես առաջին լրագրողն եմ եղել, որ Հայաստանում երբեւէ ձեռքազրկուել է՝ Ռոբերտ Քոչարեանի օրօք գոնէ, եւ դա, փաստօրէն, արձանագրել են նաեւ միջազգային կազմակերպութիւնները»:

ԻՐԱՆԻ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ 69 ՄԱՐԴՈՒ ՄԱՅՈՒՆ ՄԱՍԻՆ

Ընդդիմադիր առաջնորդ ՄիրՀոսեյն Մուսավիի կողմնակիցը յայտարարել է, որ Յունիսի 12-ի ընտրութիւններէն յետոյ ծայր առած անկարգութիւններում գոհուել է 69 մարդ, այսօր հաղորդել է Ռոյթեր գործակալութիւնը՝ վկայակոչելով տեղական գանգուածային լրատուամիջոցները: «Հետընտրական անկարգութիւնների ժամանակ գոհուած 69 մարդկանց անունները... ներկայացուել են խորհրդարան հետաքննութիւն կատարելու համար: Հաշուետուութիւնը նաեւ բովանդակում է շուրջ 220 ձեռքարկուածների անուններ», - մէջբերում է գործակալութիւնը Ալիուրզա Հոսեյնի Բեհեշտիի խօսքը: Իրանի իշխանութիւնները հաղորդում են անկարգութիւնների ժամանակ 26 գոհուածների մասին: Դատական ատենանի ներկայացուցիչ Ալիուրզա Ջամշիդիի խօսքով, նախագահական ընտրութիւններից յետոյ ամբողջ երկրում կալանաւորուել է

աւելի քան չորս հազար բողոքաւոր: «Սակայն նրանցից 3700-ն ազատ է արձակուել կալանաւորուելուց յետոյ առաջին շաբաթուայ ընթացքում», - մէջբերում է գործակալութիւնը Ջամշիդիի խօսքը: Ձեռքարկուածների թւում են ընդդիմադիր քաղաքական գործիչներ, լրագրողներ, ակտիւիստներ եւ իրաւաբաններ: Խորհրդարանի խօսնակ Ալի Լարիջանին իրանի գանգուածային լրատուամիջոցներին հաղորդել է, որ կալանաւորների եւ նրանց գործերը, ովքեր գոհուել են յուզումների ժամանակ, «հանգամանօրէն քննութեան կ'առնուեն խորհրդարանի կողմից»: Յունիսի 12-ին իրանում կայացած նախագահական ընտրութիւնների արդիւնքների յայտարարումից յետոյ ընդդիմութեան կողմնակիցներն իշխանութիւններին մեղադրել են քուէարկութեան արդիւնքների նենգափոխման մէջ եւ պահանջել են չեղեալ յայտարարել դրանք:

ՂԱՐԱԲԱՂՅԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԸ ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՅԵԼ ՀԱՅՊԱՆԵԱՆԻՆ

Շարունակուած էջ 1-էն

Սարգիս Հացպանեանի դէմ հալածանքը սկսած Մարտ 1-ի դէպքերէն ստղին եւ քրէական գործ յարուցուած էր իր նկատմամբ՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի մէկ հրատարակման հիման վրայ, ուր Հացպանեան յայտնած էր, թէ Սերժ Սարգսեանի դէմ մահափորձ կը նախապատրաստուի, իր իսկ շրջապատին կողմէ:

Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի Յունիս 19-ի համաներման մասին օրէնքը կը տարածուի նաեւ Հացպանեանի վրայ, սակայն անոր ազատ արձակելու գործընթացը ձգձգուելի: Ոչ Հայաստանի, ոչ ալ Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնները համապատասխան տեղեկանք չեն տրամադրէր, որպէսզի Հացպանեան կարողանայ ապացուցել, որ ինք մաս-

նակից է Արցախեան պատերազմին եւ որպէս մարտական գործողութիւններու մասնակից կարողանայ օգտուիլ համաներման իր իրաւունքին:

Լեւոնային Ղարաբաղի Ազգային Ժողովի պատգամաւոր Գեղամ Բաղդասարեան ցաւով արձանագրեց, որ ներկայիս Հայաստանի մէջ «այդպիսի մարդիկ են յայտնուած բանտում, եւ այդպիսի մարդիկ են դուրս մնում համաներման ցուցակից՝ արցախեան պատերազմին սեփական մասնակցութիւնը փաստաթղթային ձեւով ապացուցելու անկարողութեան պատճառով»:

«Ինչ վերաբերում է Արցախին, ես առիթ եմ ունեցել ցաւով նշելու, որ նորանկախ երկիրը ԺԵԿ-ի չափին քննուողութիւն չունեցաւ համապատասխան տեղեկանք տրամադրելու Սարգիս Հացպանեանին, իսկ մինչ այդ՝ Ժիրայր Սեֆիլեանին», - ըսաւ պատգամաւորը:

ԵՐԲ ՊԻՏԻ ԳԱՅ ՍԹԱՓԵԼՈՒ ԺԱՍԸ

Շարունակուած էջ 2-էն

զաւորման գործընթացին մասին: Օրինակի համար, երկար տարիներ Լեւոնային Ղարաբաղի կարգաւորման բանակցութիւններուն ընթացքին հետեւելէ ետք, յանկարծ, ընթացիկ տարուան եօթներորդ ամսունան պարգուեցաւ, թէ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորումը կը գտնուէր, պատասխանատու եւ շրջադարձային հանգրուանի մը առջեւ: Իսկ մատուցուած սկզբունքներու վեց կէտերուն մասին, ոչ մէկ յիշատակութիւն կը կատարուէր նախապէս, հակամարտութեան ամբողջ 20 տարիներուն...: Հայ ժողովուրդը դժբախտաբար գրկուած է երեւոյթներուն եւ դէպքերուն ծանօթանալու հիմքերէն...: Մէկ բան միայն յստակ դարձաւ, որ Հայաստանի ֆուլթայուլասէր նախագահ Սերժ Սարգսեան,

ֆուլթայուլասին դիւանագիտութեամբ եւ ոչ՝ ճատրակային տրամաբանութեամբ կ'ուզէ լուծել հայ ժողովուրդի ու ներկայ Հայաստանի առջեւ ծանրացող երկու կարեւորագոյն հարցերը:

Այսօր, Հայաստանի մէջ, նոյնպէս ալ Սփիւռքի, շփոթի մատնուած է ժողովուրդը, չի գիտեր՝ որո՞ւն հաւատայ: Քարոզչական գետնի վրայ ստեղծուած է լուրջ բաց մը, գործ թուրքիս լաւապէս կ'օգտագործէ Արեւմուտքին ձեւապնդումը, որ իբրեւ թէ հրաժարած էր Հայաստանի դէմ ներկայացուցած իր նախապայմաններէն: Բանակցութիւններու ներկայ հանգրուանը ձեռնտու է թուրքիոյ եւ Ատրպէյճանին, իսկ Հայաստանը ստեղծուած կացութեան առջեւ տակաւին կը գլանայ սթափելու իր թմբիկէն:

«ԱՐԱՐԱՏ»

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

ՎԱՐՅԱԶՐՈՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅՍՕՐՈՒԱՅ ՄՈԴԵԼԸ ԱՆՏԱՌԻ ՕՐԵՆՔՆ Է

ՄՈՆԱ ԱԻԱԳԵԱՆ ՀԵՏՔ



«Հետք»ի հարցերին պատասխանում է Քանատայի «Նախիջե-լան» գիտաուսումնական կենտրո- նի նախագահ, Մոնրեալի համալ- սարանի միջազգային յարաբերու- թիւնների մագիստրոսութեան թեկ- նածու, քաղաքագէտ Անդրանիկ Պետրոսեանը:

Պրն. Պետրոսեան, ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամի գլոբալ մասշտապները ի՞նչ են յու- շում սա միայն ֆինանսատնտեսա- կան է, թե՞ նաև ուրիշ ճգնաժամերի համախումբ է:

Ներկայ ֆինանսական-տնտե- սական ճգնաժամը խորքին մէջ առաջին հերթին կը նշանակէ հա- մակարգի ճգնաժամ: Կապիտալիզ- մի ներկայ տարբերակի՝ նէոլիբե- րալիզմի կամ նոր ազատական կա- պիտալիզմի ճգնաժամն է:

Այս համակարգի ձախողման հետ կան նաև այլ ձախողումներ եւ այլ ճգնաժամեր, որոնցմէ մէկը էներգիայի ճգնաժամն է. աշխարհը չափազանց կը գործածէ որոշ բա- ներ, եւ այդ ուղղութեամբ պատե- րագծներ եւ մրցակցութիւն կայ: Կայ նաև ուտելիքի ճգնաժամ: Ժողովուրդները ամբողջ կրնան սովի մատուցել, եւ կրկին պատճա- ուր մեծերու եւ որոշ կապիտալիս- տական շրջանակներու աշխատանքն է: Ասոր հետ կայ նաև բնապահպա- նական ճգնաժամը, որը արդիւնքէ մասամբ մարդու անտարբերու- թեան եւ, անշուշտ, նաև դրամա- տիրական շրջանակներու գերշա- հոյթի վազքի պատճառով բնու- թեան քայքայման եւ չարաշահ- ման:

Դուք նշեցիք, որ ճգնաժամը կապուած է կապիտալիզմի հետ եւ կապիտալիզմի բացասական կողմե- րը նշեցիք: Իսկ դրական կողմեր կա- պիտալիզմում ունի՞:

Կապիտալիզմն ունեցած է դրա- կան կողմեր այն իմաստով, որ կապիտալիզմը՝ որպէս գործ ստեղ- ծող, արդիւնաբերութիւն ստեղծող առաջադիմական հասարակութիւն, նկատուած էր որոշ ազդակ 19րդ եւ 20րդ դարու որոշ ժամանակաշը- շանին:

Եթէ կապիտալիզմը ունեցած է դրական կողմեր Արեւմուտքի մէջ, յատկապէս Երկրորդ համա- շարհային պատերազմէն վերջ, ատի- կա կապիտալիզմի պատասխանա- տուներուն անձնական խղճամտու- թեան արդիւնքը չէ, այլ արդիւնք

է առաջին հերթին ժողովրդային շրջանակներու կազմակերպուած շարժումներուն, արեւմտեան պայ- քարներուն, որ կ'ըսենք սոցիալա- կան շարժում: Այսինքն՝ կապիտա- լիզմը ստիպուած էր ընդունիլ, որ պէտք է աշխատաւորներուն լաւ նայի, լաւ աշխատանքային պայ- մաններ ստեղծի: Եւ սոցիալ-դե- մոկրատիայի կուսակցութիւններու պայքարը եւ կոմիունիզմի վախը մղեցին այդ դրամատիրական շրջա- նակներու Արեւմուտքի մէջ համա- ձայնուիլ, որ ստեղծեն կապիտա- լիզմի եւ սոցիալիզմի խառն հա- մակարգ մը, որ բոլորին կը գոհաց- նէր: Ատով ստեղծուեցաւ հաւասա- րակշռուած սիստեմ մը 30-40 տա- րի Արեւմտեան Եւրոպայի մէջ, որոշ չափով Քանատայի եւ Ամերի- կայի մէջ: Կապիտալիստական շրջանակները այսօր կը մերժեն ժողովուրդներուն մասին մտածել, այլ միմիայն կը մտածեն հարուստ շրջանակներու կամ փայտէրերու շահերուն մասին, ինչը կը մղէ ըսել, որ «մենք պարտաւոր չենք գործաւոր պահել, մենք կ'երթանք դէպի Ասիա, ուր հազարաւոր մար- դիկ ունէ գինով մեզի աշխատին»:

Ուրեմն, կապիտալիզմը այսօր դադ- րած է դրական ըլլալէ, ընդհակա- ուակը՝ կը մտնայ ժխտական փուլին մէջ ամբողջ աշխարհի համար: Հակասութիւն չկայ՝ նրանում, որ մի կողմից կապիտալիստական երկրները յայտնի են որպէս Արեւմու- տեան Եւրոպայի ժողովրդավարական, ամենից զարգացած երկրները, իսկ միւս կողմից՝ կապիտալիզմն այլևս մարդկանց մասին չի մտածում: Արեւմտեան Եւրոպայի կապի- տալիստական երկրները խառն համակարգ է, զուտ կապիտալիզմ չէ: Սոցիալական պայքար եղած է, սոցիալ-դեմոկրատիայի, սոցիալիզ- մի որոշ տարրեր մտած են Արեւմու- տեան Եւրոպայի կապիտալիստական

սիստեմի մէջ, ինչ որ ստեղծած է մի համակարգ, որ կապիտալիզմին տուած է մարդկային դիմագիծ:

Երկրորդ՝ ժողովրդավարու- թիւնը բնաւ կապ չունի կապիտա- լիզմին հետ: Ժողովրդավարու- թիւնը ինքնին արժէք մըն է, որուն ամէն ժողովուրդ կամ ամէն տարա- ծաշըան ցանկացած է, եւ կապի- տալիզմը չաւանդած է ըսել, թէ «իրենք են ժողովրդավարութիւն ներկայացնողը», երբ այդպէս իրա- կանութիւնը չէ: Խորքին մէջ այ- սօրուայ վիճակը Արեւմուտքի մէջ ցոյց կու տայ, որ դեմոկրատիան եւ կապիտալիզմը միասին չեն եր- թար:

Եւ ասիկա օգտագործուեցաւ, որովհետեւ Խորհրդային Միութեան մէջ, ուր դեմոկրատիա չկար, սոց- իալիզմի անուսով խօսուեցաւ: Այ- սօր մենք շատ լաւ գիտենք, որ առանց դեմոկրատիայի՝ ընկերվա- րութիւն՝ սոցիալիզմ, չըլլար: Ու- րեմն իրենք օգտագործեցին Սովե- տական Միութեան այսպէս ի հա- մակարգը արդարացնելու համար, թէ «իրենք են դեմոկրատիան»: Մենք այսօր գիտենք, որ Խորհրդա- յին Միութեան փլուզումէն վերջ կարգը եկած է արեւմտեան համա- կարգի փլուզումին, որ նոյնպէս իր տկարութիւնները ունէր, եւ մէկու անկումով միւսին անկումն է, որ կը պատրաստուի այսօր:

Ձեր գնահատմամբ՝ ո՞ր մոտելն է աւելի ժողովրդավարական եւ ամե- ցածր ժողովրդավարականը:

Որեւէ ժողովրդավարական մոդել պէտք է ընդունուի բնակչու- թեան մեծամասնութեան կողմէ եւ ստեղծէ աշխարհի ունէ մէկ շրջանի բնակչութեան համար տանելի, ըն- դունելի պայմաններ եւ մարդկա- յին վերաբերմունք: Սիստեմ մը, որ տեւակաւ մրցակցութեան մա- սին կը խօսի եւ վայրի մրցակցու- թեան, ուր ուժի վրայ կը հիմնուի, ուր զօրաւորին կամքն է, որ կը գործադրուի, չի կրնար ժողովր- ղավարական ըլլալ, եւ այսօրուայ կապիտալիզմը, նէոլիբերալիզմը գո- րաւորի ուժին վրայ կեցած է: Կապիտալիզմը իր ներկայ ընթաց- քով մարդկայնութեան չերթար, այլ կ'երթայ բարբարոսութեան:

Ընդհակառակը՝ այն համա- կարգը մարդկային կրնայ ըլլալ, որ մարդկութեան, բնակչութեան ի նպաստ կ'աշխատի եւ ոչ թէ փոք- րամասնութեան: Եւ այդ համա- կարգը տեսականօրէն պէտք է ըլլայ սոցիալիզմը:

Սակայն Խորհրդային Միու- թեան սոցիալիզմը ձախողեցաւ ճիշտ այդ պատճառով, որ համակարգը չըրուեցաւ ժողովրդավարական հիմքերու վրայ, այլ վերեւից պար-

տադրուեցաւ: Եւ ճիշտ ասոր հա- մար է, որ այսօր աշխարհի մէջ այս ներկայ սիստեմին բարեփոխու- թեան բոլոր կողմնակիցները կ'ըսեն, որ «մենք պէտք է սկսինք ժողովր- դավարութիւնը ներքեւից»: Երբ ներքեւից ժողովրդավարութիւն կը սկսինք, կը նշանակէ, որ ժողովուր- դին պահանջներուն ականջ կը կախենք: Երբ ժողովուրդին պա- հանջներուն ականջ կը կախենք, տնտեսական եւ քաղաքական ուժ ունեցողները ստիպուած են գիջիլ, որովհետեւ իրենք փոքրամասնու- թիւն կը ներկայացնեն: Իսկ եթէ ժողովուրդին պահանջքը հասնի տեղ մը, կը նշանակէ, որ սոցիալա- կան արդարութիւնը, ժողովուր- դին՝ մարդկային կեանք պարիլը, մարդկային դիմագիծով հասարա- կութիւն ունենալը կը դառնայ տիրապետող:

Այսօր մենք կը գտնուինք ռեգրեսիայի մէջ: Եթէ աս վիճակը շարունակուի, ստեղծուած կացու- թիւնը բոլոր ժողովուրդներուն ալ վտանգաւոր է: Մարդկութեան, մո- լորակի սպազմալ վտանգուած է: Ի՞նչ իմաստով է վտանգուած:

Բնութեան քայքայում, եւ բնա- կան է՝ ժողովուրդներու մեծամաս- նութեան վատ պայմաններու մէջ ապրելու վիճակը, ստրկացած վի- ճակը: Կապիտալիզմը այսօր դէպի ստրկացման կը տանի:

Այսօրուայ նէոլիբերալիզմի քարոզչութիւնը, որ Ամերիկայէն կու գայ, կ'ըսէ, «պայքար, մրցիլ մինչեւ մահ»: Այսինքն՝ տեղ չի ձգեր համերաշխութեան, համա- գործակցութեան: Համագործակցու- թիւնը մարդկային է: Իսկ վայրի մրցակցութիւնը, վայրի բախում- ները, որ ամերիկացիները այսօր կ'ուզեն աշխարհին պարտադրել յանուն կապիտալիզմի, ամբողջ աշ- խարհի հասարակ ժողովուրդնե- րուն վտանգաւոր է, նոյնիսկ ամե- րիկացի ժողովուրդի համար:

Սոցիալիզմը չի՞ ենթադրում այդ- պիսի վայրի մրցակցութիւն:

Բուն սոցիալիզմը չի ենթադ- րեր: Հիմա հարցը հոն է, որ դարերու աշխատանք պէտք է: 19րդ, 20րդ դարու սոցիալիզմը ունեցաւ որոշ ձեռքբերումներ, ունեցաւ նա- եւ ձախողութիւններ, որովհետեւ միակողմանի կերպով մեկնաբան- ուեցաւ որոշ շրջանակներու կողմէ, եւ ադ մեկնաբանութիւնը պար- տադրուեցաւ: Եւ պարտադրութիւնը պատճառ դարձաւ, որ սիստեմը չդառնայ ժողովրդավարական: Կա- րելի է սոցիալիզմ հիմնել՝ առանց ժողովրդավարութեան: Ատիկա մե- զի կը հասցնէ տոտալիտարիզմի:

Շարք էջ 18

Advertisement for Bedros S. Maronian insurance services. Includes logos for Blue Cross of California, Blue Shield of California, and A.A. Insurance Services. Text: SERVING SINCE 1975, BEDROS S. MARONIAN, (818) 500-9585, BMaronian@AOL.com, FAX 500-9308, ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway, Glendale, CA 91205. Includes a cartoon illustration of a man in a suit.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՐՏԻ 1-ԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԵԼ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՅԷՅ, «ԱՆԱՐԴԱՐ ԱՇԽԱՐՀ»

Այն պնդումները, որ ՀՀ իշխանութիւնները Մարտի 1-ի դէպքերից դեռեւս օրեր առաջ նախապատրաստուել են, որպէսզի Երեւանի փողոցներում ռազմական գործողութիւններ իրականացնեն, պարզուած է՝ հաստատուած են նաեւ ոստիկանութեան առանձին ստորաբաժանումներում տեղի ունեցած կազմակերպութիւններով: Մարտի 1-ի իրադարձութիւնները ուսումնասիրող փաստահաւաք խմբի անդամներ Սեդա Սաֆարեանի եւ Անդրանիկ Քոչարեանի՝ դեռեւս այս տարուայ Յունիսին հրատարակած՝ իրենց թուով երկրորդ փաստաթղթում բերուած էին Մարտի 1-ին յատուկ միջոցների կիրառման հանգամանքների ուսումնասիրութեան արդիւնքները: Ըստ այդմ, յայտնի դարձաւ, որ «Չերչոմուխա» տեղի յատուկ միջոցը, որից երեք մարդ սպանուել է, իսկ երեքը՝ վիրաւորուել, կիրառուել են ՀՀ ոստիկանութեան գործերի երկու հաշուարկի ընդհանուր թուով չորս անդամները: Այդ հաշուարկները ունեցել են իրենց առանձին ղեկավարները: ՈՁ թիւ 1033 գործաւարի յատուկ նշանակութեան Չոկատի անդամներից «Չերչոմուխա-76 կիրառուել են Մկրտիչ Ղարիբեանը եւ Վարդան Սահակեանը, իսկ նրանց ղեկավարը եղել է նշուած գործաւարի անձնակազմի գծով հրամանատարի տեղակալ Արմէն Անտոնեանը: ՈՁ թիւ 1001 գործաւարի յատուկ նշանակութեան Չոկատից յատուկ միջոցներ կիրառուել են Աւետիք Աթաբեկեանը եւ Լեւոն Յակոբեանը, իսկ նրանց ղեկավարել է նոյն գործաւարի հրամանատարի տեղակալ Մարտիրոս Դաւրանեանը: Երկու դէպքում էլ խմբերի ղեկավարները մինչ այդ յատուկ միջոցների խմբի անմիջական ղեկավարման հետ առնչութիւն չեն ունեցել: Իսկ ինչո՞վ է բացատրուած այն փաստը, որ մարտի 1-ից մի քանի օր առաջ յատկապէս նրանք են նշանակուել յատուկ միջոց կիրառող հաշուարկների ղեկավար: Պարզուած է, Փաստահաւաք խմբի անդամների հարցերին պատասխանելիս՝ նոյն ՈՁ թիւ 1001 գործաւարի յատուկ նշանակութեան Չոկատի հրամանատար Բագրատ Խաչատրեանը վերը նշուած փոփոխութեան պատասխանը տուել է. նա ուղղակի մատնանշել է այն փաստը, որ Մարտիրոս Դաւրանեանը պատերազմական գործողութիւնների փորձ ունի, քանի որ մասնակցել է Ղարաբաղեան պատերազմին: Սա այն դէպքում, երբ պաշտօնական վարկածով, իբր, ՀՀ իշխանութիւնները Մարտի 1-ին ռազմական գործողութիւնները ծրագրած չեն եղել, իբր՝ ոստիկանութիւնը Մարտի 1-ին գնացել է

Ազատութեան հրապարակում զննութիւն կատարելու, իբր՝ բախումները նստացոյցի մասնակիցներն են սկսել:

Աւելին, վերը բերուած փաստը վկայում է նաեւ այն մասին, որ Մարտի 1-ին Միասնիկեանի արձանի մօտ ընթացող հանրահաւաքի մասնակիցները որեւէ ձեռով չէին կարող կանխել երեկոյեան Չարդերը, քանի որ այն ի սկզբանէ ծրագրուած է եղել: Ռազմական գործողութիւնների նախապէս ծրագրման մասին է փաստել նաեւ ՈՁ թիւ 1033 գործաւարի հրամանատարի տեղակալ Արմէն Անտոնեանը: Երբ Փաստահաւաքի անդամները նրանից հետաքրքրուել են, թե նա Մարտի 1-ին է իմացել, որ ինքն է ղեկավարելու յատուկ միջոցներ կիրառող խումբը, նա բառացի ասել է. «Ոչ, Մարտի 1-ին չեմ իմացել, մի քանի օր առաջ, երբ հաշուարկներ արեցինք, այդ ժամանակ իմացայ, որ այդ պարտաւորութիւնը ինձ վրայ է դրուած»: Յիշեցնենք, որ, ըստ լուրերի, Մարտի 1-ի սպանդի նախապատրաստման գործընթացի մեկնարկը տրուել է դէպքերից մէկ շաբաթ առաջ՝ Փետրուարի 23-ին, երբ նախագահական նստավայրում գինուորական բարձրաստիճան հրամանատարութեան մասնակցութեամբ խորհրդակցութիւն է անցկացուել, որի ժամանակ էլ, այսպէս ասած, հրահանգներ է տրուել, թէ ով ինչ պէտք է անի ՀՀ մայրաքաղաքի կենտրոնում Հայաստանի քաղաքացիների դէմ մարտական գործողութիւններ իրականացնելու ժամանակ:

Ռազմական գործողութիւնները ղեկավարուել են մէկ կէտից: Մարտի 1-ի իրադարձութիւնների պաշտօնական վարկածով, իբր՝ երբ սկսուել են երեկոյեան ռազմական գործողութիւնները, այդ ժամանակ խառնաշփոթ իրավիճակ է եղել: Այսինքն՝ ոստիկանական ուժերը մէկ կէտից չեն կառավարուել, այլ գործել են առանձին-առանձին, ըստ իրավիճակի: Այսպիսով՝ ՀՀ իշխանութիւնները փորձում են խուսափել այն հարցին պատասխանելուց, թէ ով է, ի վերջոյ, պատասխանատու տեղի ունեցած Չարդերի համար: Սակայն, 1033 գործաւարի հրամանատարի տեղակալ, շտաբի պետ Արմէն Անտոնեանը այս առնչութեամբ բառական հետաքրքիր տուեալ է հաղորդել Փաստահաւաք խմբին: Այն հարցին, թէ յատուկ միջոցներ կիրառող իր ղեկավարած եւ միւս խումբը որտեղի՞ց են հրամաններ ստացել եւ իրար հետ ինչ առնչութիւն են ունեցել՝ նա ուղղակի պատասխանել է, որ գործողութիւնները ղեկավարուել եւ հրամանները արձակուել են մէկ կէտից:

Մտղկածորում օգոստոսի 7-ին պատասխանելով ուսանողների եւ լրագրողների հարցերին, Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մէթիւ Բրայզան մի քանի կարեւոր յայտարարութիւն է արել: Մասնաւորապէս, հարցին, թէ ինչու ԱՄՆ-ն ճանաչել է Կոսովոյի անկախութիւնը, բայց չի ճանաչում Ղարաբաղի անկախութիւնը, Բրայզան պատասխանել է, որ դրանք որակապէս տարբեր ինդիւրներ են: Սերբիան յարձակուել է Կոսովոյի վրայ, այդ պատճառով էլ ՄԱԿ-ի անվտանգութեան խորհուրդը ստիպուած է եղել ճանաչել Կոսովոն: Կոսովոն պայքարով նուաճել է իր անկախութիւնը, աւելացրել է Բրայզան:

Թւում է, թէ Բրայզան չգիտէ, որ Սերբիայի պէս, Ադրբեյջանն էլ յարձակուել է Ղարաբաղի վրայ, եւ դրաբաղցիները պայքարով նուաճել են իրենց ազատ ապրելու իրաւունքը: Եւ սակայն, մի դէպքում դա ճանաչուած է, մէկ այլ դէպքում՝ ոչ: Միաժամանակ, Բրայզան խօսել է նաեւ հանրաքուէի մասին, ասելով, թէ ադրբեյջանցի փախստականների վերադարձից յետոյ պէտք է հանրաքուէ տեղի ունենայ ԽՍՀՄ վերջին մարդահամարի համաձայն, ըստ որի բնակչութեան 65 տոկոսը հայեր են, 22 տոկոսը ադրբեյջանցիներ: Նա ասել է նաեւ, որ 10 տարի առաջ Հայաստանի դիրքերը շատ աւելի ուժեղ էին, քան ներկայում, եւ Հայաստանը չի կարող որեւէ լուծում պարտադրել Ադրբեյջանին:

Բրայզայի այս մտքերը գուցէ առաջին հայեացքից անհեթեթ թուան, մանաւանդ աշխարհի եւ քաղաքականութեան վերաբերեալ իւրաքանչեւ պատկերացումներ ունեցող հայկական քաղաքական-հասարակական «մտքի» համար, որն «արդարացիօրէն» կարող է վրդովուել «անարդար աշխարհից», «երկակի ստանդարտից»: Եւ սակայն, Բրայզայի խօսքը լուրջ մտորում-

ների տեղիք պէտք է տա: Եթէ, իհարկէ, մեր քաղաքական վերնախաւի մօտ դեռեւս մնացել է մտորելու կարողութիւն ու ցանկութիւն:

Բանն այն է, որ Բրայզայի խօսքն այն բանալին է, որը տանում է մեր պատկերացրած հայաստան լուծմանը: Երբ նա խօսում է անկախութիւնը պայքարով նուաճելու եւ 10-ամեայ վաղեմութեան մասին, նկատի ունի այն, որ 10 տարի առաջ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնն անկախութեան նշաններ էր ցոյց տալիս. մասնակցում էր բանակցութիւններին, վարում քիչ թէ շատ ինքնուրոյն արտաքին ու ներքին քաղաքականութիւն եւ այլն: Երբ Ղարաբաղն իր այդ իրաւունքները գիշեց Հայաստանին, դրանով ցոյց տուեց, որ անկախութիւն իրեն պէտք չէ: Ձիջելով արտաքին քաղաքականութիւնը, Ղարաբաղն աստիճանաբար սկսեց գիշել նաեւ ներքին հարցերում, իսկ նախագահի վերջին ընտրութիւնից յետոյ ԼՂՀ լիակատար կախուածութեան մէջ ընկաւ Հայաստանի ներկայիս վարչակարգից:

Նման պայմաններում աշխարհը չի կարող ճանաչել ԼՂՀ անկախութիւնը: Ինչ վերաբերում է Կոսովոյին, ապա այն, իր համար բարեբախտաբար, չունի «մետրոպոլիս» ոչ լեզիսիմ իշխանութիւններով, որն իր հերթին լիակատար կախուածութիւն ունենար որեւէ տէրութիւնից, չունէր ամէն ինչ յանձնելու պատրաստ քաղաքական վերնախաւ, չունէր հայ դատի գրասենակներ ու լոբբիսթ, որոնք ամէն մէկն իր հերթին լրդգէր այդ ժողովրդի ազատ ապրելու կամքը, շեղէր նրան իր ուղուց:

Թուրքը այլեւս պէտք է գիտակցի, թէ հրէական հրկիզումը կատարած Հիթլէրի նացիական վարչակարգին նման իրենք ալ վարչակարգ ունեցած են ու այդ դեկավարութեան շրջանին նախ՝ տեղահանութեան, ապա ցեղասպանութեան ենթարկած են հայերը:

Թուրքը այլեւս պէտք է գիտակցի, թէ այդ նացիական վարչակարգը հանրապետութեան շրջանին ալ կը շարունակուի: Արեւմտեան Հայաստանի խորքերը մնացած հազարաւոր հայերու 30-ական թուականներուն բռնի տեղահանումը, ինչպէս նաեւ քիւրտերու իրենց գիւղերէն բռնի հեռացումը եւ այդ գիւղերուն հրկիզումը, Թրակիոյ հրեաներուն իրենց ծննդավայրերէն խուճապահար դէպի Պոլիս ու Պաղեստին փախուստին պատճառ գարհուրելի դէպքերը, 40-ական թուականներուն հայերու, նաեւ յոյներու եւ հրեաներու «քան դասակարգի գինուորագրում»ը, «ուներութեան տուրք»ի ենթարկումը, որու հետեւանքով՝ շատերու անանկացումը, եւ ոմանց աքսորավայրի մէջ մահանալը նացի, ֆաշիստ վարչակարգի մը պտուղներն են: 6-7 Սեպտեմբերի զազիր դէպքերը միայն նացի վարչակարգ մը կրնար կազմակերպել ու գործադրել: Թրքահայութեան ազգային հարստութեան պետութեան կողմէ յափշտակումը նացիական գործելակէպ է:

Թուրքիոյ Հանրապետութեան քաղաքացի հայեր կը նկատուին երկրորդ դասակարգի քաղաքացիներ, նաեւ՝ լրտեսներ ու այս թրքահայատակ հայերով կը գբաղի արտաքին գործոց նախարարութեան յատուկ մէկ գրասենեակը:

Սա ինքնին նացի վարչակարգի գոյութեան անուրանալի փաստն է:

Անցեալ Նոյեմբերին Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Վեհտի Կէօնիւլ հարց տուած էր, թէ «Թուրքիան նոյն երկիրը պիտի ըլլա՞ր այսօր, եթէ հայերը եւ յոյները մեր երկրէն ներս ապրած ըլլային», եւ աւելցուցած, թէ անհրաժեշտութիւն էր փոքրամասնութիւններու բնաջնջումը: Նման գործունէութիւն մը միթէ նացիական վարչակարգի մը գործելակերպը չէ՞: Նախարարին արտայայտութիւնը միթէ նացիական գործունէութեան գովաբանումը չէ՞:

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Ես ընդհանրապէս անգլիացիները չեմ սիրեր: Այս զգացումս չի հիմնուիր ցեղային նկատումներու վրայ, այլ իրենց վարած համաշխարհային քաղաքականութեան եւ գաղթատիրութեան պատճառով: Ցեղային խտրականութեան եւ մարդկային իրաւունքներու ոտնակոխումին վրայ հիմնուած Մեծ Բրիտանիոյ համաշխարհային կայսրութիւնը կը տարածուէր Ափրիկէէն մինչեւ Մերձաւոր Արեւելք, Աւստրալիա, Ամերիկա եւ Գանատա՝ յոխորտանքի մղելով անգլիացի գաղթատէրերը յայտարարելու, թէ «անգլիական կայսրութեան մէջ արեւը մար չի մտներ»: Անգլիացի բանակայինները իրենց գինարբուքի ընթացքին ամբարտաւան կերպով կ'երգէին «Rule Britannia, Britannia rule the world», (Իշխէ Բրիտանիա, իշխէ աշխարհին): Այս դիմագիրծով ներկայացող անգլիացիներն են պատճառը հակակրանքիս, հակառակ անոր որ սեփական տեսակէտներով եւ փորձառութեամբս համակրանք պէտք է ունենամ, նախ որ պատմական վարկածի մը համաձայն, անգլիացիներուն մէջ մասը Հայաստանէն արտագաղթած ու հաստատուած Անգլիա: Երկրորդ, աշխատանքային փորձառութեամբս մօտէն շփում ունենալով բազմաթիւ անգլիացիներու հետ, ընդհանրապէս լաւ տպաւորուած եմ:

Բայց Անգլիոյ ներքին քաղաքականութեան մէջ տարբեր է պատկերը եւ ատացած տպաւորութիւնս: Ներկայացուցիչներուն Տան եւ Լորտերու պալատին մէջ տեղի ունեցող բոլոր վիճաբանութիւնները, անկաշկանդ քննադատութիւնները իսկական ժողովրդավարութեան կիրարկումը ցոյց կու տան: Հանրային ծառայութեան վրայ եղող պաշտօնատարները ինչ դիրքի վրայ ալ ըլլան ենթակայ են քննադատութեան եւ հաշուետու են ժողովուրդի ներկայացուցիչներուն՝ վարչապետէն մինչեւ լետին պաշտօնեան: Հակադրուելով աշխարհի վրայ շատ մը երկիրներու՝ անոնք «իշխանաւորներ չեն, այլ հանրութեան ծառայողներ են՝ Public servant անգլերէնով: Սակայն օրինակելի այս իրականութեան հակապատկերն է որ կիրարկած են իրենց կայսրութեան մէջ: Արդարեւ գաղութներու մէջ Անգլիոյ Գահին ներկայացուցիչը բռնապետի իրաւունքներով օժտուած կառավարիչն էր սուեալ երկրին, ուր տեղւոյն կառավարութիւնը կը կազմէր եւ կ'օժտէր նոյնպիսի բռնատիրական իրաւունքներով:

Իսկ ներկայիս, ժողովրդավարութիւնը (դեմոքրատի) իբրեւ արտածման ապրանք կը գործածուի ներգարգացող երկիրներուն, Անգլիոյ եւ Մ. Նահանգներուն կողմէ՝ յարձակման ենթարկուած երկիրը «դեմոքրատականացնելու» համար...: Թէ ինչո՞ւ ժամանակին չէին գործադրեր դեմոքրատի այդ արտածու-

մը եւ ներկայիս միայն կ'ընեն՝ կասկած կ'արթնցնէ իրենց բարի տրամադրութիւններուն, կամ անշահախնդրութեան մասին: Որովհետեւ մօտիկ անցեալի պատմութիւնը ցոյց կուտայ թէ անոնք նոյնիսկ ժողովուրդներու մարդկային իրաւունքները ոտնակոխող բռնատէրերը կը քաջալերին եւ նիւթապէս ու բարոյապէս թիկունք ալ կը կանգնէին անոնց, փոխարէնը ստանալու համար իրենց քաղաքական ու տնտեսական շահերը: Այս քաղաքականութեան վերջին ապացոյցներն են Իրաքի եւ Աֆղանիստանի վրայ կատարուած յարձակումները, որոնց հետեւանքով Մ. Նահանգներու հանդէպ ստեղծութիւնը համաշխարհային աստիճանի հասաւ:

Այս անբաղձալի կացութեան իբրեւ պատասխանատու Մ. Նահանգներու աղարտուած վարկը վերականգնելու փորձ կը կատարէ Մ. Ն. նոր նախագահ Պարաք Օպաման, որուն տուտապած են անիրաւուած սեւամորթ ցեղէ ըլլալը անիրաւութեանց գոհ գացած ժողովուրդները կը մղէր յուսալու, թէ ան պիտի սրբագրէր այդ բոլոր անարդարութիւնները, որոնց գլխաւորն էր, մեզի համար, ցեղասպանութիւնը: Բայց աշխարհի քաղաքական հրապարակին վրայ հետզհետէ «հասունացող» նախագահը կը թուի թէ կարծուածին չափ ալ պատասխանատու չի մնար իր յանձնառութիւններուն ու կատարած խոստումներուն, չի շեցնելով իր նախորդներուն պատեհապաշտ ընթացքը, վերջին Ապրիլ 24ի առթիւ անոր դիմափոխութիւնը ատոր ապացոյցը եղաւ, երբ ան խուսափեցաւ համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին պատմական Հայաստանի մէջ ապրող շուրջ երկուք ու կէս միլիոն հայ ժողովուրդը աքսորի եւ ջարդի ենթարկած թուրքիան ցեղասպանութեան յանցանքով դատապարտելու: Այս ահաւոր ոճիրը իբրեւ պատմական անհերքելի իրականութիւն ճանչցող Պարաք Օպաման գալն իր իսկական անունով՝ Ցեղասպանութիւն որակելու փոխարէն՝ «Մեծ Ողբերգութիւն» կոչեց գալն: Ճիշդ է որ Ապրիլի նոյն այդ օրերուն Հայաստանի նախագահ Ս. Սարգսեան թուրքիոյ հետ հաշտութեան բանակցութիւններու ձեռնարկած էր, առիթ եւ պատրուակ տալով Օպամային պատուած ճիշտ յայտարարութիւնը չկատարելու: Բայց անխուսափի է մտածել, թէ ատիկա Ս. Սարգսեանի սխալն էր, թէ մղուած էր ծրագրուած այդ սխալը գործելու, Օպամայի նահանջի ճամբան բանալու համար:

Ամէն պարագայի, տակ պատճառը վերոյիշեալ երկու կարելիութիւններէ որ մէկն ալ ըլլայ, անգամ մը եւս ցեղասպանութիւնը Մ. Նահանգներու եւ Թուրքիոյ ընդունիլ տալու առիթը կորսուեցաւ, հայութիւնը դնելով այդ ուղղութեամբ պայքարը շարունակելու հարկադրանքին տակ:

533 W. Glencoe Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծածախականութեան և մանուկներու Թարափորաբարձի բուժում: Գլխացաւ, վզի, մէջքի, բոցային և մկանային ցաւեր: Ինքնուշարժի վթարի հետեւանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտանոցութիւնն է

Ի ՅԻՇԱՏԱԿ

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ, ԲԱԶՄԱՇՆՈՐՅ ԵՒ ՏԻՊԱՐ ՅՈՒՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՆԵՐՍԵՍ ԱՐՔ. ՊՈԶԱՊԱԼԵԱՆԻ ՄԱՅՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԹԻ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Յունիսի 27-ին Գերաշնորհ Տ. Ներսէս Արք. Պողոսապալեանը կնքեց իր մահականացուն, որը փետրուարի 18-ին կողոպուտի նպատակով յարձակման էր ենթարկուել իր ծանօթի կողմից ու ծանր վիրաւորուելով անգիտակից վիճակում տեղափոխուել հիւանդանոց: Դժբախտաբար ժամանակակից Հայաստանը դարձել է բիրտ ուժերի օրրան, որոնց որոշ դէպքերում հովանաւորում են երկրի ամենաազդեցիկ ղեկավարներն իրենց նպատակներն իրագործելու միտումով: Որոշ չար ուժեր, լցուած ատելութեամբ ու նախանձով, սեւ սքեմի տակ մուտք են գործում նաև եկեղեցու սպասաւորների մէջ ու կարող են ամէն տեսակի շարիք գործել ցանկացած հոգևորականի դէմ: Նրանք ուղղորդում են հզօր ուժերի կողմից, որի մասին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում լուծւում են՝ հասկանալով, թէ այդ լուծութիւնը խզող ինչ ճակատագրի կ'արժանանայ: Սրբազանի մահով ընդհատուեց նրա նուիրական ծրագրերի իրագործումը հանդէպ հայ եկեղեցին ու ժողովուրդը: Նրա կեանքի ու գործունէութեան բարեմասնութիւններին լայնօրէն անդրադարձան հայկական մամուլն ու հեռուստատեսութիւնը՝ որպէս հայ ժողովրդի արժանի գաւալի:



նակակիցը, որը հայրական ջերմութեամբ պատեց նրան և հնարաւորութիւն ընձեռեց ուսանելու, իսկ Սրբազանը արդարացրեց Վեհաբարի յոյսերը և միշտ հաւատարիմ մնաց նրան: Վազգէն Վեհափառը վստահեց նրան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ամենապատասխանատու պաշտօններից մէկը՝ դիւանապետի պաշտօնը, որը նա մեծ հմտութեամբ վարեց երկար տարիներ:

Երբ վախճանուեց Ամենայն Հայոց Գարեգին Ա. Հայրապետը, 1999 թ. Յունիսի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհրդի կողմից Ներսէս Արք. Պողոսապալեանը ընտրուեց կաթողիկոսական տեղապահ՝ և 1999 թ. Հոկտեմբերի 27-ին բարեյաջող կազմակերպեց նոր կաթողիկոսի ընտրութիւնը, անշեղորձ կատարելով իր պարտականութիւնները: Նա արժանի էր Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուելու, բայց քաղաքականութեան մէջ գործող հզօր ուժերը ուղղորդում են նոյնիսկ Ս. Էջմիածնի Աստուծոյ սպասաւորներին՝ ըստ իրենց հայեցողութեան...:

Երկար տարիներ աշխատելով Ամենայն Հայոց Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի հետ, Ներսէս Արք. Պողոսապալեանը ընդօրինակեց նրա գործելաոճը: 2000-2003 թթ. իր ծնողների՝ Գրիգոր և Մաքրուհի Պողոսապալեանների յիշատակին նա կառուցեց Սրբոց Նահատակաց եկեղեցին Կոտայքի շրջանի Թեղենիս գիւղում: Մեր ժամանակներում այդպիսի բարերար հոգևորականներ քիչ են: Սրբազանի աճիւնը ամփոփուեց իր կառուցած եկեղեցու բակում:

Որպէս եկեղեցական արժանի գործչի, նրա յիշատակը պէտք է յաւերժանայ Ս. Էջմիածնում:

Ներսէս Արք. Պողոսապալեանի մահուան եւ քառասունքի առթիւ, Բահարեան գերդաստանի կողմից խորին ցաւակցութիւն եմ յայտնում Սրբազանի քոյրերին ու հարազատներին:

Յիշատակն արդարոց Օրհնութեամբ եղիցի:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ ՊԻՏԻ ՆՇՈՒԻ ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ Ա 131-ՐԴ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կազմակերպութեամբ եւ բարձր նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ տարւոյս Սեպտեմբեր 19-20 օրերուն վայել շուքով պիտի նշուի երջանկալիչատակ Գարեգին Ա. կաթողիկոսի վախճանման տասնամեակը:

Յիշատակի այս հանդիսութիւնը սկիզբ պիտի առնէ Շաբաթ, Սեպտեմբեր 19, 2009, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ: «Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Կրօնական Առաքելութեան Կրթական Կեդրոն»-ի կառուցի հիմնարկէքի արարողութիւնը պիտի կատարուի կէսօրուան ժամը 12:00-ին:


Այս կեդրոնի կառուցման բարերարներն են լոնտոնաբնակ Տէր եւ Տիկին Հայկ եւ Էլզա Տիտիգեաններ՝ որոնք երկար տարիներու բարեկամները եղած են երջանկալիչատակ կաթողիկոսին, եւ իրենք զիրենք նուիրած են Գարեգին Ա. ի իմացական եւ հոգևոր աւանդը յաւերժացնելու առաքելութեան: «Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Կրօնական Առաքելութեան Կրթական Կեդրոն»-ը պիտի ծառայէ ձեռնադրուած եկեղեցականներու վերապատրաստութեան, ինչպէս նաև եւ հոգևորականներու աստուածաբանական դաստիարակումը ու հոգևոր առաջնորդութիւնը գարգացնելու ի նպաստ: Կեդրոնը բաց պիտի ըլլայ քրիստոնէական կրթութիւն ջամբողջ ուսուցիչներուն՝ որոնք պիտի մասնակցին աստուածաբանական, հոգևոր, հովուական եւ եկեղեցույ հետ առնչուած նիւթերու մասին կազմակերպուած դիտաժողովներու եւ համագումարներու:

Սեպտեմբեր 19-ի երեկոյեան ժամը 7:00-ին՝ Յիշատակի Համերգը տեղի պիտի ունենայ Երեւանի Արամ Խաչատուրեան համերգասրահին մէջ:

Տասնամեակի յիշատակի հանդիսութիւնը պիտի շարունակուի Կիրակի, Սեպտեմբեր 20, առաւօտեան ժամը 11:00-ին՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ մատուցմամբ Ս. Պատարագի, որուն աւարտին մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի երջանկալիչատակ Գարեգին Ա. կաթողիկոսի վախճանման 10-րդ տարելիցին առիթով:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՄՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆ Ս. Էջմիածնի մէջ՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Հայրապետական Աթոռին ժառանգորդը եղաւ 1995-1999 տարիներուն: Ան կորովի հուետոր էր, քաջատեղեակ՝ վեց լեզուներու, ծանօթ եւ յարգուած դէմք՝ միջեկեղեցական շրջանակի եւ գլխաւորաբար եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին մէջ:

Ան ծնած էր Քէսապ (Սուրիա)՝ Օգոստոս 27, 1932 թուականին. աւագանի անունով՝ Նշան Սարգիսեան: Աւարտելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի ժառանգաւորաց եւ ընծայարանի բաժիններ՝ 1952 թուականին Ան ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, վերանուանելով «Գարեգին»՝ երբ



ջանկալիչատակ Գարեգին Յովսէփեան կաթողիկոսի յիշատակին: Իր ուսումը շարունակած է Օքսֆորտի Համալսարանին մէջ: Որպէս դիտորդ մասնակցած է Վատիկան Երկրորդ Խորհուրդի ժողովներուն (1963-1965), Լամպէթի Անկլիքան Համագումարին (1968) եւ Ատիս Ապեպայի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու համագումարին (1965):

Պարսկաստանի եւ Ամերիկայի մէջ ծառայելէ ետք, Մայիս 22, 1977-ին ընտրուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից կաթողիկոս: Տասնութ տարիներու կաթողիկոսութեան շրջանին՝ Ան եղած է Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի երեք նախագահներէն մին, եւ ապա, պատուոյ նախագահ՝ յիշեալ կազմակերպութեան: Հայերէն, Անգլերէն եւ Ֆրանսերէն լեզուներով Անոր գրութիւնները ամփոփուած են հատորներու մէջ:

Երբ երջանկալիչատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը վախճանեցաւ (Օգոստոս 1994, 39 տարի որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս գահակալելէ ետք) Ազգային-Եկեղեցական Ժողովը Գարեգին կաթողիկոսը ընտրեց որպէս Մայրապետի Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոս՝ Ապրիլ 14, 1995 թուականին: Ան օգտուելով օրուան քաղաքական կացութեան եւ ճարտարարուեստի ընձեռած առաւելութիւններէն, Հայ Եկեղեցույ պատմութեան մէջ ամենէն շատ ճամբորդող կաթողիկոսը եղաւ: 1996 թուականին ան ձեռնարկեց պիւլուքի գանազան շրջաններու այցելութեան՝ հանդիպելու իր հօտին եւ եկեղեցական նուիրապետական աթոռներու գահակալներուն հետ՝ ինչպէս Հոռոմի Յովհաննէս Պողոս Բ. Պապը, Բարթողիմէոս Ուղղափառ Եկեղեցիներու Տիեզերական Պատրիարքը, Ռուս Ուղղափառ Եկեղեցույ Ալեքսի Բ. Պատրիարքը եւ Քէնթըրպըրիի ձորճ Գէրի Արքեպիսկոպոսը:

Տիրոջ այս ականաւոր ծառային անժամանակ վախճանումով (Յունիս 29, 1999) Հայ Ժողովուրդը կորսնցուց իմաստուտն եւ հայրախնամ առաջնորդ մը, եւ ամբողջ աշխարհը կորսնցուց Քրիստոնեայ Եկեղեցույ իրաւ «երէց հոգևոր պետ» մը:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Avenue
 Pasadena, CA 91107
 Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով (200-էն մինչեւ 450 sq. feet)
 Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
 (626) 797-7680

ԱԶԱՏ ԱՄՊԻՈՆ

**«ՄԵԼԿՈՆԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԽՕՍԳԸ
Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵԼԿՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ
ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՍԻՐՈՑՆ**

Մելգոնեանի Փակուժը և Մելգոնեանցիներու Ընդդիմութիւնը

Մելգոնեան կրթական Հաստատու թեան (Մ.Կ.Հ.) նուիրեալ և մտախոյով շրջանաւարտներ, աշխարհի ամէն կողմերէն համախմբուելով կազմած են «Մելգոնեան Սանուց և Բարեկամներ» (Melkonian Alumni & Friends, www.melkoniannews.org) ոչ-հասութաբար կազմակերպութիւնը, որուն գլխաւոր նպատակը եղած է դէմ կենալ և կասեցնել ծրագրուած փակուժը և կալուածներուն վաճառքը՝ հայ մշակոյթի և դպրութեանց դարձնելով «Կիպրոսի Մելգոնեան կրթական Հաստատու թեան»:

ինչպէս ծանօթ է, ՀԲԸ Միութեան վարչութեան Մարտ 2004ի որոշումով «Մելգոնեան»ը Յունիս 2005ին փակուեցաւ, կազմալուծուեցաւ և դադարեցաւ գործել: Որպէս երկուստեք գիշերօթիկ երկրորդական հայկական վարժարան: Շատ չանցած ՀԲԸՄ-ի նախագահ Պրն. Պերն Սեդրակեանի կարգադրութեամբ Մելգոնեանը բարեսիրարար փոխ տրուեցաւ Կիպրոսի կրթական Նախարարութեան որպէսզի երկու տարուայ համար դպրոցական շէնքերն ու բոլոր յարմարութիւնները գործածուին՝ 500-է աւելի աշակերտութիւն ունեցող Նիկոսիոյ Աղլաննայի Կիմնագիտմի կողմէ: Երկու տարին վաղուց անցած է արդէն, բայց Աղլաննայի Կիմնագիտմի կը շարունակէ հաստատման և ձրիօրէն օգտագործել Մելգոնեանի կալուածները:

Մելգոնեանցիներու «Կոչ»ը

Համաշխարհային բոլոր Մ.Կ.Հ. Սանուց Միութիւններու կողմէ վերջերս Սփիւռքի և Հայաստանի բոլոր թերթերուն մէջ հրատարակուեցաւ «Կոչ» մը և ստորագրահաւաքի արշաւ, «Մելգոնեան»ը վերաբանալու մասին: Փափառողներ կրնան այցելել www.midk.org կայքէջը և մասնակցիլ ստորագրահաւաքին, հայերէն կամ անգլերէն:

Ենով Պալիկեան Կը Կապուի...

Ընթացիկ տարուան Յունիսի սկիզբները, Լոս Անճելոսի մի քանի հայատառ թերթերու մէջ հանդէս գալով, «ՀԲԸՄ»ի հատաւոր անդամներէն մէկը՝ Պրն. Ենով Պալիկեան, որ «պաշտօնական որեւէ հանգամանք չունի», ինքզինքին իրաւունք կու տայ պաշտպան կանգնելու ՀԲԸՄ-ին և ՀԲԸՄ-ի ներկայից կարծիքներուն վարած քաղաքականութեան՝ մասնաւորաբար Մելգոնեանի փակման և կալուածներու վաճառման առնչութեամբ, միեւնոյն ատեն մոլեռանդօրէն իր մաղձն ու գայրոյթը «շոյալելով» Մելգոնեան Սանուցի անդամներուն հասցէին: Իր այս երկարատև մտաբանումներէն կրնանք հետեւեցնել որ Պրն. Պալիկեան միայն «պարզ» ՀԲԸՄ-ական մը չէ, այլ՝ «գիտութեամբ», հլու ու հնազանդ բայց մասնաւոր մոլեռանդ ՀԲԸՄ-ական մըն է:

Մոլեռանդութիւնը կը խորհիմքէ լաւ յատկանիշ մը չի կրնար նկատուիլ քանի որ մոլեռանդ մէկը յանախ կը դադրի տրամաբանական ըլլալէ, սխալ վերլուծումներ կը կատարէ, չի կրնար լաւ դիտել ու դատել և իր մոլորցիմ մէջ անպայման կը տարուի իր դիմացիներ վարկաբեկել՝ ցեխ արձակելով:

Ընդդէմ Մելգոնեան Սանուց Միութիւններու

Արդարեւ, Պրն. Պալիկեան կը փորձէ անուանակել աշխարհացրի Մելգոնեան Սանուց Միութիւնները, որոնք անկէտու պայման կը մղեն, ի գին ամէն գոհողութեան, հետապնդելով միայն մէկ վեհ նպատակ, այն է՝ վերաբացում տեսնել «Մելգոնեան»ը, այլ մասնաւոր խափանել և չթոյլատրել «Մելգոնեան»ի կալուածներուն վաճառքը: Հոս տեղին է յիշել և յատկացնել որ Մելգոնեանցիներուն դատը ՀԲԸ Միութեան դէմ չէ, այլ կը միտի միայն ու միայն «Մելգոնեան»ը բաց պահելու, որպէսզի ան շարունակէ իր առաքելութիւնը Կիպրոսի մէջ որպէս գիշերօթիկ երկրորդական վարժարան համայն հայութեան համար: Այս կապակցութեամբ, Մելգոնեանցիներ և բարեկամներ աշխարհի ամէն կողմերէն, դատապարտելով ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան ազգավնաս որոշումը, սիրայօժար և առատաձեռնօրէն մասնակցեցան դատական ծախսերուն:

Ընդդէմ Դոկտ. Տէր Զաւէն Աւաք-Քեհեյ Արզումանեանի

Պրն. Պալիկեան միշտ չէ որ գրիչ կը շարժէ: անունը հագուադէպօրէն կը տեսնենք հայ մամուլի էջերուն մէջ: Մեր յիշողութեան մէջ է սակայն իր վերջին յօդուածը, աս կէ մօտ երեք տարի առաջ, որով ան, իր գրիչը դարձնալ ժահրատ մեղանի մէջ թաթխած՝ փորձեց պախարակել մեր յայտնի եկեղեցականներէն մտաւորական անձնաւորութիւն մը, որ համարձակած էր ՀԲԸՄ-ի 100 մասնակիւն առիթով իր սրտցաւ մտահոգութիւնները մամուլի միջոցաւ արտայայտելու, «Մելգոնեան»ի փակման կապակցութեամբ...

Կեդրոնական Վարչութիւնը՝ «Անսխալական»

Ցաւալի է որ հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքին պարբերաբար կոյր ու բուրձառնողներու ենթակուելով մխրնուած է անել կացութիւններու...:

Մեզի այնպէս կը թուի թէ ՀԲԸՄ-ի ներկայ պատկանելի վարչութիւնը մերք ընդ մերք կը գիտնորագրէ որոշ անձնք՝ թերթերու մէջ Պատկանելի Վարչութեան թմբակահարութիւնը ընելու նպատակաւ: Ըստ Պրն. Պալիկեանի, այնպէս կ'երեւի որ Պատկանելի Վարչութիւնը անսխալական է, սակայն իր այս յօդուածով ան յստակօրէն կը փաստէ ՀԲԸՄ-ի Պատկանելի Վարչութեան անձնակազմի անսխալութիւնը և ապիկարութիւնը՝ «Մելգոնեան»ը կառավարելու, «Մելգոնեան»ի կրթական և մասնաւոր ֆինանսական խնդիրները լաւագոյն յանձնառնելու: «Մելգոնեան»ի փակումը 30 երկար տարիներու լուրջ օրակարգի հարց եղած է և ապա գործադրուած փակման անփոփոխելի և վերջնական ամենադժուարին բայց իմաստուն ու հեռատես որոշումը» կը գրէ Պրն. Պալիկեան:

Ինչո՞ւ Փակուեցաւ Մելգոնեանը

Դոկտ. Ա.գապի Նասիպեան-Էմմէ Բեան (ի դէպ՝ Պրն. Պալիկեանին բնիկն) որ երկար տարիներ պաշտօնավարած է Մելգոնեանէն ներս որպէս ուսուցիչ և տնօրէն, «Մտածումներ Մելգոնեան Բարեբարներու Օրում Առթիւ» վերնագիրով յօդուածին մէջ հարց կու տայ. - «Ինչո՞ւ փակուեցաւ Մելգոնեան»ը և կ'ափսոսայ՝ «ոչ ոք տակաւին հասկցած է պատճառը: Բայց եթէ թերացումներ և թերութիւններ կային, ինչո՞ւ չսրագրուեցան անոնք ժամանակին»: (Դոկտ. Նասիպեան-Էմմէ Բեանի յօդուածը կարելի է կարդալ՝ այցելելով www.melkonianforever.org կայքէջը new/articles/puad.htm տակ):

լեզուով www.melkonianforever.org կայքէջը new/articles/puad.htm տակ):

Հարցում Մը... «Մոլորեալ Աղմկարարներու» կողմէ

Պրն. Պալիկեանին և իրեն նման մտածողներուն հարց կու տանք... ՀԲԸՄ-ի իմաստուն և հեռատես դեկավարներուն համար արդեօ՞ր 30 տարիները բաւարար չեղա՞ն Մելգոնեանի թերութիւններն ու թերացումները սրբագրելու...:

Պրն. Պալիկեանը միայն պատշաճօրէն կը թմբակահարէ ՀԲԸՄ-ի դեկավարներուն առաջ կ'առնա պատճառաբանութիւնները Մելգոնեանը փակելու մասին, լորցնաշուրթն փառաբանելով անոնց իմաստութիւնն ու անսխալականութիւնը...:

Յօդուածին մէջ, Մելգոնեան Սանուցի հասցէին փրփրեալ կարգ մը անարգական ու ատելալար որակու մներէն, վերագրումներէն և գրպարտանքներէն դատելով՝ կրնանք եզրակացնել որ ՀԲԸՄ-ի դեկավարութիւնը նշմարտապէս խոցում աւելտէ ըլլալ Մելգոնեանցիներու «կոչին» և ստորագրահաւաքին պատճառաւ: Պրն. Պալիկեան սարսափի մատնուած է կարծէ՛ք, երբ կը գրէ թէ՛՝ «Մելգոնեանցիներ անպատասխանատու մոլորեալ աղմկարարներ են, որոնք պիտի տապալեն և կործանեն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը...», ատելութիւն, ոխ և անչափ չարութիւն կայանոց հոգիներուն մէջ, որ կ'ուզեն կործանել հայկական բարեսիրական միութիւնը մը...: Հայտ ի՞նչ անվայել վարմունք է այս: Եւ այլն, եւ այլն...:

Ընդվզում... Պահանջատիրութիւն... Նախաձեռնութիւն

Այս բոլորը անշուշտ բարբառանքներ են պարզապէս, անհիշտ, անհիմն և անհեթեթ, ուղղուած Մելգոնեան Սանուց Միութիւններու հասցէին, որոնք ջախջախիչ մեծամասնութեամբ, աշխարհով մէկ, ընդվզում միակամ ուժի ելան նեցուկ կանգնելու մեր տարածաշխատանքներուն իրենց նիւթական և բարոյական աջակցութեամբ կասեցնելու համար Մելգոնեանի փակումն ու վաճառքը: Արդար պահանջատիրութեան միացաւ հայ մամուլը, գանազան կազմակերպութիւններ, Հայ ժողովուրդը:

Մելգոնեանի բարձրարժէք կալուածներուն շուտափոյթ վաճառքը բացորոշ էր և անշուշտ կարելի պիտի դառնար եթէ Կիպրոսի Սանուցի նախաձեռնութեամբ չ'իրագործուէր հետեւեալը. Կիպրոսի կառավարութիւնը գիտակցելով ՄԿՀ-ի պատմական, մշակութային և ազգային արժէքին՝ յատուկ հրամանագրով մը (Մարտ 31, 2008) հաստատեց Մելգոնեանի շէնքերուն և 40 էլքր ընդհանուր հողատարածքին 60 տոկոսին անձեռնմխելիութիւնը՝ իրրեւ պատմաճարտարապետական ազգային ժառանգութիւն, իսկ յարակից պուրակը՝ որպէս «կանաչ գօտի»:

Այս կանոնագրութիւնը թէ և կը նուազեցնէ կալուածներուն դրամական արժէքը, բայց և այնպէս կը խոչընդոտէ գայն վաճառելու կարելիութիւնը, քանի որ օրէնքը նոյնպէս խստիւ կ'արգիլէ կալուածներու որեւէ ձեւափոխում:

Մեր Մեծագոյն Կորուստը

Սփիւռքահայ որեւէ դպրոցի փակումը մեր մեծագոյն կորուստն է: Արեւմտահայութեան մշակոյթին ու լեզուին քննադատման իրագործելու ամէնակարգ միջոցը դպրոց փակելն է, հոգ չէ թէ ինչ ըլլայ այդ արարքին տուն տուն պատճառը, իմաստութիւնը, կամ բացատրութիւնը: Կարելի չէ լրիւ իրագործել Հայաստանի բարգաւաճումը՝ անդամահատելով, տկարացնելով և աղաւաղելով սփիւռքահայ մշակոյթը, հայեցի ուսման ու կրթութեան ենթակառոյցը:

Բարեբարներուն Նպատակը, Տեսլականը, Կտակը...

Պրն. Պալիկեանի ընտանեկան պարագաներուն Մելգոնեանցի ըլլալը որքան որ իրաւասութիւն կու տայ իրեն պաշտպանելու ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան կողմէ: ՄԿՀ-ի փակումը, մեր Մելգոնեանցի ըլլանալ նոյն չափով իրաւասութիւն կու տայ մեզի պաշտպանելու ՄԿՀ-ի յարատեւ գոյութիւնը իր ներկայ հողերուն վրայ:

Ազգային մեծագոյն բարեբար Կարապետ Մելգոնեանի հետեւեալ խօսքերը որքան դիպուկ են և յիշատակելի. «Ես այս դպրոցը կը շինեմ Ազգիս վրէժը լուծելու համար...: Թուրք մեզ մաղէ անցու, ջարդեց նախ մեր մեծերը, մեր վարիչները ու ապա՝ մեր ամբողջ անտէր ազգը...: Այդ որք ձագու կները պէտք է իրենց հօրենական տունը նորէն շինեն, և անոնցմէ պէտք է պատրաստեն մեր մեծերը... կը փափաքիմք մեր Մելգոնեան կրթական այս հաստատութիւններ տեսնել դարձ: դարձ և ըլլան լուսաւորութեան օգտակար և պարկեշտ նկարագրի մը, հայիայրեմիքին և մարդկութեան օգտակար և պարկեշտ նկարագրի մը անդամներ»: Այս էր բարեբարներուն տեսլականը և այս նպատակին համար էր որ անոնք հայ ազգին կտակեցին իրենց վիթխարի հարստութիւնը որուն միայն տոկոսով հաստատութիւնը պիտի տեսնէր դարձ: դարձ:

Աղմուկ՝ Ազգավնաս Արարքի Մը Դէմ

Արդարեւ Մելգոնեանի հարցը իւրաքանչիւր սփիւռքահայի հարցն է, իրաւականէն շատ աւելի բարձր: Կը յուսանք որ այս հարցին շուրջ Պրն. Պալիկեան իր ընտանիքի Մելգոնեանցի անդամներուն հետ վէճի մէջ չէ...:

Մեր Մելգոնեանցի ըլլալը նաեւ իրաւունք կու տայ մեզի «աղմկարար» ըլլալու և դրդալից աղմուկ բարձրացնելու կատարուած ազգավնաս արարքի մը դէմ:

To raise hell! Ինչպէս կ'ըսուի անգլերէնով: Դժոխային աղմուկ մը պէտք է, և առանց դադարի, արծարծ պահելու համար Մելգոնեանի հարցին հրատապութիւնը ոչ միայն աշխարհացրի Մելգոնեանցիներու այլ և սփիւռքի և հայրենիքի լայն շրջանակներէն ներս:

«Փողոց Իջնել»...

«Հայկական որեւէ լուրջ կազմակերպութիւն չ'արտօնէր ինքզինքին փողոց իջնել կամ պատասխաններ տալ անհատներու կամ խմբակցութեան մը...» կը վնդէ Պրն. Պալիկեան: Չենք գիտեր, ի՞նչ կը նշանակէ «փողոց իջնել»: Արդեօ՞ր մտաւորացիք է փողոց իջնել և ժողովուրդին հետ յարաբերիլ: Իսկապէս ա՞յս է արդեօ՞ր ՀԲԸՄ-ի դեկավարներուն հոգեբանութիւնը: Արեւմտեան երկիրներուն մէջ նոյնիսկ կառավարութիւններ, նախագահներ, կը պատասխանեն անհատներու հարցումներուն և մտահոգութիւններուն... փողոց իջնելով:

Կր գարմամանք բէ ինչո՞ւ չՔԸՄ-ի դեկավարները Պրն. Պալիկեանի մամն մէկը պիտի գործածէին, պարգապէս հակադարձելու Մելգոնեանցիներուն բարձրացուցած «աղմուկին»: ՉՔԸՄ-ի մամն մեծ կազմակերպութեան համար «աղմուկարարներու» հետ վարուելու լաւագոյն ձեւը պիտի ըլլար գանձումները:

Եւրոպայի Մէջ Ազնուափայլ եւ Յարգելի Տիկին Մը...

Սակայն երբեք կատի կ'անոնենք յոյուածին ատելական ու մադոտ բովանդակութիւնը, կը մղուինք եզրակացնելու թէ ՉՔԸՄ-ի համար Մելգոնեանցիները կը նկատուին «խոտվարար թշնամիներ» որոնք պէտք է զգտնուին...: Պրն. Պալիկեան կը մոռնայ որ իր կողմէ «ինքնակոչ աղմուկարար» որակուող «մարդիկը» երբեմնի ՉՔԸՄ-ի կողմին բեղուն եւ գործուն անդամներ էին, երբ «անդամակցութիւն» գոյութիւն ունէր...: Ցաւալի է նաեւ որ յարձակումի թիրախ դարձած է «Եւրոպայի մէջ նուիրեալ միութեան կան, ազնուափայլ եւ յարգելի տիկին մը» որ իր թէ ՉՔԸՄ-ի դեկավարներու մի քանիներէն ներդրած ոխու ատելութիւն ունի եղեր... եւ վրէժառնելու համար ինքնալ միացած է այս աղմուկարարներուն եւ սկսած է նիւթապէս օգնել իր նոր գործակիցներուն» եւ այլն: Այս պարագան ցոյց կու տայ թէ որ չափով պատկանելի կեդրոնական վարչութիւնը անտեղի իրարանցումի եւ նուաստացուցիչ կացութեան մատնուած է...:

Դոկտ. Արշալիր Կէօնեանի Ֆորմիւլը` Դպրոց Փակելու Մասին

«Դպրոց մը բանալը գեղեցիկ, ազգաշէն աշխատանք մըն է, բայց դպրոցը արդարացնելու է իր գոյութիւնը կրթական իր մակարդակով, իր աշակերտութեան թիւով եւ ի վերջոյ, պիտունէով: Այլապէս դպրոց մը, պարգապէս որ հայ դպրոց է, գոյութիւն ունենալու իրաւունք ունի»: Այս յայտարարութիւնը ՉՔԸՄ-ի փոխտեմնակալ Դոկտ. Արշալիր Կէօնեանը քրտ անցնելու տարի Սեպտեմբերին, Սաութֆիլտի մէջ, Միշիկըն, ԱՄՆ, Պրն. Յակոբ Վարդիվառեանի հետ հարցազրոյցի մը ընթացքին, որ լոյս տեսաւ Մարտ 14, 2009ին, Հայրենի «Ազգ» թերթին մէջ: (www.azg.am կայքէջ, արխիւ «Մեր Հանդիպումները»):

Արդարեւ տրամաբանական կը գտնենք Դոկտ. Կէօնեանի ֆորմիւլը (սահմանում մը) որ հաւանաբար ներկայիս իրրեւ ուղեցոյց-լապտեր կը գործածուի ՉՔԸՄ կեդրոնական վարչութեան կողմէ, եւ ատով կ'առաջնորդուի երբ դպրոց փակելու որոշում կ'առնէ:

Բազմաթիւ Դպրոցներ Փակուեցան

Որքան որ գիտենք վերջին տասնամակներուն Սփիւռքի տարածքին փակուեցան բազմաթիւ այլ դպրոցներ եւս, որոնց փակուելու պայմաններն ու պարագաները թէ եւ ծանօթ չեն մեզի, բայց եւ այնպէս կընամ կոտակել որ անոնք գուցէ չէին լրացնել Դոկտ. Կէօնեանի վերեւ յիշուած պայմանները:

Բայց Ինչո՞ւ Մելգոնեանը

Այս այսպէս ըլլալով հանդերձ, հիմա հոս դարձեալ պիտի ուզէինք անդարդառնալ Մելգոնեան կրթական Հաստատութեան փակման ցաւոտ հարցին: Բայց ինչո՞ւ փակուեցաւ Մելգոնեանը: Այս հարցումը դեռ եւս կը չարչարէ մեր միտքերը, քանի որ տրուած պատճառաբանութիւնները արդարանալի չեն:

Պրն. Սարգիս Պազնեանի Տեղեկագիրը

Մելգոնեանի փակումը Յունիս 2005ին իր բոլոր բացասական հետեւանքներով ապահովարար Սփիւռքի հրատապ հարցերէն մին է, եթէ ոչ ամենէն հրատապը: Ամենայնդէպս, կընամ վստահ ըլլալ որ Մելգոնեանը լի ու լի եւ նոյնիսկ աւելիով կը լրացնէր վերոյիշեալ երեք պայմանները: Ի դէպ, մեր տրամադրութեան տակ ունինք ՄԿԶ Հոգաբարձութեան ատենակալ Պրն. Սարգիս Պազնեանի Նոյեմբեր 3, 2003ի ընդարձակ տեղեկագիրը, ինչպէս նաեւ ՄԿԶ վերջին շրջանաւարտից հանդիսութեան, Յունիս 12, 2004, Պրն. Պազնեանի արտասանած նաոք, ուր հաւաստի վիճակագրական տուեալներով, Մելգոնեանի ընթացիկ կացութեան եւ ապագայի կարելիութիւններուն մասին դրական եւ յուսալի պատկեր մը կը ներկայացուի:

Ըստ այս տեղեկագրին՝ (ա) Վերջին ութ տարիներուն աշակերտութեան թուաքանակի անը հասած էր 251-ի: Յարմարութիւններ կային այդ թիւը բարձրացնելու մինչեւ 300-ի, բայց կեդրոնէն կը հրահանգուէր աշակերտութեան թիւը 200-ը չանցնել պիտունէի դժուարութիւն չստեղծելու համար: (բ) Ուսումնական մակարդակը անախընթաց բարձունքի վրայ էր շրջանաւարտներուն 90 տոկոսը առանց դժուարութեան եւրոպական եւ Ամերիկեան համալսարաններու մէջ կը շարունակէր բարձրագոյն ուսումը: (գ) Մելգոնեանի եկամուտը եւ ամփարկը նոյնպէս յաւելում կըրած էր շնորհիւ Կիպրոսի բարեխնամ կառավարութեան յատկացումներուն, Մելգոնեան Հիմնադրամէն, Մելգոնեան առեւտրական շէնքէն, ուսանողներէն ստացուած հասոյթներէն, եւ այլն, այս բոլորը դպրոցը ինքնաբար դարձնելու կարելիութիւններ կը ստեղծէին:

Առաւել, կայ նաեւ Մելգոնեան բարեբարներուն Ազգին բողոքած անձեռնմխելի անհաւանդ անոնց պայծառ տեսլականը եւ փափաքը «որ Մելգոնեան կրթական այս հաստատութիւնները տեսն դարձ դար ու ըլլան յուսաւորութեան վառարաններ տալու համար հայ ազգին, հայ հայրենիքին եւ մարդկութեան օգտակար եւ պարկեշտ նկարագրով անդամներ»:

Կեդրոնական Վարչութեան Զօրավիզը...

Ուրախալի եւ քաջալերական է իմանալ Դոկտ. Կէօնեանի վերոյիշեալ հարցազրոյցէն թէ՛ կեդրոնական վարչական ժողովը վերջապէս հասած է այն եզրակացութեան որ վերեւ յիշուած երեք պայմանները եթէ լրացնեն Միութեան կրթական մեր օճախները, պիտի ունենան զօրավիզը կեդրոնական վարչութեան: Վստահ ենք որ հազարաւոր Մելգոնեանցիներ եւ բարեկամներ ցնծութեամբ պիտի ողջունեն այս յուսադրող յայտարարութիւնը: Այս կապակցութեամբ անոնք պատրաստ են եւ յօժարակամ, յանձնառնելու ամէն գոհողութիւն: Մեր բոլորին ջերմ փափաքն ու երազն է վերաբացուած տեսնել այս ազգօգուտ հաստատութիւնը որպէսզի ան կարենայ շարունակել իր առաջնութիւնը սփիւռքի մէջ, որպէս ամբողջ հայեցի դաստիարակութեան եւ հայապահպանման:

Մելգոնեանը Պէտք է Վերաբացուի...

Մեծ դեր վիճակում է հայկական վարժարաններուն՝ պահպանելու համար արեւմտահայերէն լեզուն եւ մշակոյթը, որոնք վտանգուած են եւ ենթակայ անհետացման, եթէ չկարենանք բաց պահել մեր վարժարանները սփիւռքի մէջ:

Մելգոնեանը ըլլալով միակ գիշերօթիկ երկսեռ հաստատութիւնը արտերկրի մէջ, պէտք է վերաբացուի եւ վերակազմուած շարունակէ իր առաջնութիւնը:

«Մելգոնեան կրթական Համալիր»ը եւ Կիւմրիի Սառնարանը...

ՉՔԸՄ-ը ներկայիս կը ֆինանսաւորէ միայն հայրենական ծրագիրներ: ՉՔԸՄ-ի դեկավարութեան կողմէ ծրագրուած, Հայաստանի մէջ հիմնուելիք «Մելգոնեան կրթական Համալիրը» կամ «Նոր Համալսարանական Աւանը» պիտի կարենա՞յ Կիպրոսի ՄԿԶ-ի դերը ստանձնել եւ գայն փոխարինել: Արդարեւ Հայաստանի «Մելգոնեան կրթական Համալիրին» մասին տրուած կցկտուր տեղեկութիւնները հաւատքի յոյս չեն ներշնչել, տրուած ըլլալով որ ծրագիրը տակաւին մինչեւ հիմա չէ յստակացած, խարխափափայլ կ'ընթանայ, եւ չէր մտադրուած Մելգոնեանը փակելէ առաջ...: Կ'ըսուի թէ հոն պիտի հիւրընկալուին աշխարհի տարբեր երկիրներէ շուրջ 400 հայ համալսարանական ուսանողներ, եռամսեայ կամ կիսամսեայ դրութեամբ: Անոնց պիտի դասաւանդուի Հայոց լեզու, հայ գրականութիւն, հայոց պատմութիւն, անոնք հայկականութեամբ պիտի թրծուին, այս ձեւով ՉՔԸՄ-ի դեկավարութիւնը նպաստած պիտի ըլլայ հայապահպանութեան եւ հայեցի դաստիարակութեան: Միաժամանակ սփիւռքահայերի տասարդ ուսանողները «պիտի կարենան տիրանալ համարժէք վկայականներու Հայաստանի մէջ գործող Հայկական, Ամերիկեան, Յրանսական, Ռուսական համալսարաններէն»... եւ այլն եւ այս բոլորը առաւելագոյն վեց ամիս կեցութեամբ՝ այս «կոթողային հաւաքակալին» մէջ...:

Բայց Ինչո՞ւ «Մելգոնեան» անունը:

Գլխաւոր նարտարպետ Արիս Աղամեան կը բացատրէ. «Որովհետեւ անոր գոյութեան երաշխիքը հանդիսացող ֆինանսաւորումն մեծագոյն մասը պիտի գոյանայ շնորհիւ Կիպրոսի Մելգոնեան կրթական Հաստատութեան կալուածներուն մասնակի հիմնադրամէն»:

Ուրեմն Մելգոնեանի կալուածները պէտք է ծախել որպէսզի կարելի ըլլայ իրականացնել այս «Համալիրին» մեծածախ շինարարութիւնը:

Մեր միտքերուն մէջ տակաւին բարձ է Հայաստանի երկրաշարժէն անմիջապէս յետոյ ՉՔԸՄ-ի դեկավարութեան կողմէ կառուցուած հինգ միլիոն տոլար արժողութեամբ Կիւմրիի հսկայական սառնարանը, որ քանի մը տարի առաջ ծախուեցաւ միայն 150,000 տոլարի, քանի որ սխալ ծրագրուած ըլլալուն դատուաւ գործածական բան մը չէր, այլ պարզապէս սխալ յիշուած «Ներմակ փիղ» մը... (White Elephant) ...:

«Մելգոնեան կրթական Համալիր»ը որ Կիւմրիի սառնարանէն տասնապատիկ աւելի ծախսալից ծրագիր մըն է, նկատի առնելով բոլոր տուեալները, ամենայն հաւանականութեամբ, Կիւմրիի սառնարանին նկատագրին կընայ ենթարկուիլ... դարձալուստաբանութեան մատնելով ՉՔԸՄ-ի հասարակ հատատարի մնու իրատուները:

Կիպրոսի Մելգոնեանը՝ Ի Սպաս Հայրենիքի Յառաջդիմութեան եւ Բարգաւանման

Մելգոնեան, իր բացառիկ աշխարհագրական դիրքով Կիպրոսի մամն հիւրընկալ եւ բարեացակամ եւրոպական անդամ երկրի մը մէջ՝ դէպի եւրոպա բացուող դուռ մը կընայ ըլլալ Հայաստանի համար: Հայաստանէն ամէն տարի որոշ թիւով ուսանողներու ներգրաւումը Մելգոնեանէն ներս՝ ոչ միայն պիտի սատարէ որ անոնք ստանան բարձրորակ երկրորդական ուսում եւ պատրաստուին եւրոպական եւ ամերիկեան համալսարաններ ընդունուելու, որպէսզի մասնագիտութիւններ ձեռք բերելով անոնք վերադառնան ու ծառայեն հայրենիքի յառաջդիմութեան եւ բարգաւանման, այլ նաեւ պիտի նպաստէ Սփիւռք-Հայաստան կապերու առաւել սերտացման:

Վերջացնելով Մեր Խօսքը...

Վերջացնելէ առաջ կ'ուզէինք անցնել հետեւեալը. Պրն. Պալիկեան յոխորտանով կը յիշէ իր ընտանեկան բոլոր պարագաները որոնց համար «Մելգոնեան կրթական Հաստատութիւնը բացառիկ նշանակութիւն եւ կարեւորութիւն ունեցած է», իր երկու գաւակները օգտուած են ՄԿԶ-ի բարիքներէն եւ Մելգոնեանի շրջանաւարտներ են: Պրն. Պալիկեան վստահաբար գոհ է ՄԿԶ-ի իր գաւակներուն ջամբած դաստիարակութեան, հայեցի կրթութեան: Բայց եւ այնպէս ան կ'ուզէ նոյն այդ բարիքները զանալուրիշներուն, ՄԿԶ-ի փակումին թէզը պաշտպանելով: «Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ» կազմակերպութիւն Melkonian Alumni and Friends, www.melkoniannews.org admin@melkoniannews.org

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ
CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)
GLOBACAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱՉ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 280-րդ կայանից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅՍՕՐՈՒԿՅ ՄՈՂԵԼԸ ԱՆՏԱՌԻ ՕՐԵՆՔՆ Է

Շարունակում է 6-էն

Դուք իրատեսակա՞ն էք համարում, որ սոցիալիզմ կը լինի, եւ որքա՞ն փամանակում դա կը լինի:

Ատիկա սերունդներու աշխատանք է, որ պիտի ըլլայ: Սոցիալիզմը պիտի դնէք հեռաւոր նպատակ, ինչպէս որ կապիտալիզմը 400-500 տարի է գոյութիւն ունի: 400-500 տարուայ մէջ կապիտալիզմը ըրաւ ձեռքբերումներ, ունեցաւ ձախողութիւններ: Սոցիալիզմը նոր սկսաւ: 150 տարուայ պատմութիւն է, եւ իւրաքանչիւր սերունդ պիտի իրականացնէ, որքան որ կրնայ ընել, մինչեւ որ կարողանան ստեղծել համակարգ մը աշխարհի համար, որ աւելի մարդկային եւ տանելի ըլլայ:

Ձեր գնահատմամբ՝ ո՞ր մոդելն է աւելի ձեռնարկ Յայաստանին եւ կը նպաստի նրա զարգացմանը:

Հայաստանի համար ձեռնարկ մտտելը այն է, որ Հայաստանի ժողովուրդին համար կը ստեղծէ զարգացման մակարդակ եւ մարդկային հասարակութիւն մը: Այսինքն՝ Հայաստանի բոլոր քաղաքացիները իրարու փոխանակ հարուածելու՝ միասին կ'աշխատին թէ՛ իւրաքանչիւրին յառաջադիմութեան եւ թէ՛ երկրին յառաջադիմութեան համար: Եւ այդ մտտելը միայն կրնայ սոցիալական ուղղուածութեամբ մտտել մը եւ ոչ թէ կապիտալիզմի եւ ծայրայեղ մրցակութեան մտտելը, ուր միայն անտառի օրէնքը կը տիրապետէ:

Հայաստանի այսօրուայ մոտեւոր անտառի օրէնքն է: Անտառի օրէնքով Հայաստան կարելի չէ կառուցել: Եւ պէտք է գիտնալ, որ այսօրուան Հայաստանի կառուցումը միայն քանի մը հոգիի համար չէ, ամբողջ Հայաստանի ժողովուրդի համար պէտք է ըլլայ եւ ամբողջ աշխարհի հայութեան, քանի որ մեր միակ հայկական հողակտորն է, որ մեր ձեռքն է՝ Արցախի հետ միասին:

Այսօրուայ Հայաստանի պատասխանատուները, օլիգարխները այդ գիտակցութիւնը չունին: Օլիգարխները կը կարծեն, որ իրենց անձնական «դաշան» կը շինեն ամբողջ Հայաստանին մէջ: Եւ աս մտաչնութիւնը պէտք է փոխուի:

Դուք տեսնո՞ւմ էք տեղաշարժ, որ փոխուում է այդ մտայնութիւնը:

Օլիգարխներու մօտ այդ մտայնութիւնը չէ փոխուած: Բայց կրնայ փոխուիլ, եթէ ժողովուրդային կազմակերպուած շարժում ըլլայ, որ պէս քաղաքացիական հասարակութիւն, իրաւունքներ պահանջելու, ձեռքբերումներ ունենալու, երբ ժողովուրդը կը կազմակերպուի եւ պահանջներ կը դնէ, որ «մենք այս կ'ուզենք»: Պիտի ընէք: Եթէ չընէք, պիտի իջնաք ձեր աթոռէն ընտրութիւններու ճամբով»:

Իսկ եթէ ընտրութիւնները ոչ օրինակաւ ձեւով են անցնում...

Ուրեմն ժողովուրդը պիտի մտածէ՝ ինչ ձեւերով կրնայ իր ձայնը լսելի դարձնել այս երկրին մէջ:

Ինչպէ՞ս կարելի է լսելի դարձնել:

Ատիկա Հայաստանի ժողովուրդին կը մնա, նոր սերունդներուն յատկապէս՝ մտածեն, դասաւորեն, ստեղծեն իրենց մէջ ղեկավարութիւն մը, որ այս բոլոր հարցերը կը քննէ, կը հետեւի աշխարհի փորձին եւ շարժումներուն եւ կը ստեղծէ պէտք եղածը:

Բայց պէտք է գիտնալ, որ աշխարհի փորձը ցոյց կու տայ, որ իշխանութեան վրայ գտնուող ունէ ուժ, որ կը տեսնի, որ ներկայ կացութիւնը իրեն ձեռնառու է, թոյլ պիտի չտայ, որ այդ ժողովուրդային շարժումը տեղ հասնի, ինչ որ կը ստեղծէ հակադրութիւն: Պիտի օգտագործեն բանակը, ոստիկանութիւնը, մահակի պէս ժողովուրդին գլխուն գարնեն, ինչպէս կը պատահի Լատինական Ամերիկայի մէջ կամ Երրորդ աշխարհի երկիրներուն մէջ: Ատիկա եղած է շատ յաճախ, եւ Հայաստանը աս կացութեան առջեւ է: Կամ սերունդները առաջին տասնամեակին կազմակերպուած ձեւով միջոցներ կ'առնեն այս կացութիւնը սրբազրելու եւ Հայաստանի կառուցումը աւելի դրական ճանապարհի վրայ դնելու, որ քանի մը սերունդներու հարց է, կամ Հայաստան շատ պայթուցիկ կացութեան առջեւ կրնայ գտնուիլ, եթէ ձախողին:

Օրինակ՝ ի՞նչ կարող է լինել:

Պայթիւնավտանգ, որ ժողովուրդային շարժումը ստիպուած ըլլայ դիմելու գինական միջոցներու՝ երկրին կացութիւնը սրբազրելու համար:

Ապստամբութիւնն անկատի ունէր: Ժողովուրդային արդար ապստամբութիւն: Ներկայիս ատիկա չեմ ցանկար ոչ մէկ ձեւով: Բայց անոնք, որոնք աս երկիրը կը քայքայեն, կը թալանեն, տակաւին խելքերնին գլուխնին չէ եկած, որ եթէ ատիկա շարունակեն, ատիկա ի վնաս երկրին է եւ նոյնիսկ ի վնաս իրենց է: Սա պէտք է հասկացնել այդ իշխանաւորներին, որ բռնա-նալով, մահակով ժողովուրդին վախցնելու աս երկիրը չեն կարող կանտաւոր պահել:

Հայաստանի մոտեւոր դուք ի՞նչ բառով կը բնորոշէք:

Հայաստան յստակ մտտել մը չունի ներկայիս. քիչ մը հինէն ժառանգութիւն կայ, քիչ մը դուրսէն փոխառնուած կայ: Ոչ մէկ մտտել կայ այստեղ, որ յստակ դէպի լաւ կը տանի: Եւ անոնք, որոնք պաշտօնի վրայ են, ընդհակառակը՝ մտտելներ փոխառած են, որ Հայաստանի համար նպաստաւոր չէ, ինչպէս վարչապետին նկատելով՝ «Հայաստան պէտք է արդիւնաբերութեան նուազ ըլլայ եւ աւելի գիտական միտքի վրայ դնել»: Ատիկա ձեռնառու է Ամերիկային, ոչ Հայաստանին, որովհետեւ Հայաստանի պարագային մենք կ'ունենանք ուղեղներու արտահոսք: Երբ որ արդիւնաբերութիւն չունենանք, ուրիշին արդիւնաբերութեան վրայ պիտ մնանք: Այսինքն՝ Հայաստան ձգուած է ուրիշին գթաւատութեան, եւ այդ բացարձակապէս սխալ է: Հայաստան պէտք է ունենայ իր արդիւնաբերութիւնը, իր ներքին տնտեսութիւնը, ինքնաբաւութիւնը հնարաւորին սահմաններուն մէջ:

Այսինքն՝ Հայաստանի իշխանութիւնները, վարչապետն ալ որդեգրած են նէոլիբերալ տնտեսական մօտեցում, որ ժողովուրդին ի նպաստ չէ:

Ի՞նչ էք կարծում նեոլիբերալիզմը կապիտալիզմը, հեշտութեամբ կը գիշի իր դիրքերը մէկ այլ մոտեւոր:

Ոչ, առանց պայքարի չի գիշիր: Ոչ մէկ տեղ կապիտալիզմը գիշած է հեշտութեամբ: Եւրոպայի փորձն ալ ցոյց կու տայ ատիկա: Պայքար եղած է:

Ո՞ր երկրներում է այժմ ամէնից

ակտիւ պայքարը:

Լատինական Ամերիկայի մէջը, յատկապէս Վենեզուելա, Պոլիվիա, Էքուատոր, որոշ չափով՝ նաեւ Արժանթին եւ Պրագիլ: Բայց առաջին գիծին վրայ Վենեզուելան է:

Յաջողութիւններ անկատու է՞ն:

Այո, յաջողութիւնը ան է, որ ժողովուրդային շարժումի պատճառով Չաւեսը կարողացաւ քաղաքականութիւն մը մշակել, որ կապիտալիստները չէին ուզէր, բայց ժողովուրդի մեծամասնութիւնը կ'ուզէր: Այսինքն՝ ստեղծեցին ձրի ուսման կենտրոններ, ձրի բժշկութեան կենտրոններ:

Սխալներ, հաւանաբար, կան, ձախողութիւններ, քննադատութիւններ ալ կան: Բայց կան ձեռքբերումներ, որ այսօր Վենեզուելայի ռեժիմին կունակը ժողովուրդային դասակարգն է: Երբ որ կարգը մը ընկերութիւններ, որոնք կը գտնուէին հարուստներու ձեռքը եւ բանջարեղէն կարտադրէին, եւ կամ հաց կ'եփէին, կտրեցին ատիկա, որ ժողովուրդը սովի մատնեն, որ ռեժիմին դէմ ելլան, անմիջապէս ռեժիմը ազգայնացուց, եւ այսօր այդ հարուստներուն ձեռքէն առնուեցան այդ գործարանները եւ պետական հսկողութեան տակ ժողովուրդին տրուեցան:

Այսինքն՝ հոն գործաւորները մասնակից կը դառնան իրենց ֆաբրիքայի, գործարանի որոշումներու: Ատիկա նոր ձեւն է, որ կը գայ, որ մենք կը կոչենք ժողովուրդավարութիւն դարձնելու մէջ, պետական վարչամեքենային մէջ, բոլոր հասարակական կազմակերպութիւններու մէջ:

Հայաստանին այդ մոյժ՝ Վենեզուելայի՞ մոտեւոր է պէտք, թէ՞ մէկ ուրիշը:

Վենեզուելայի օրինակը կարելի չէ 100-ը 100-ին ընդօրինակել, որովհետեւ իւրաքանչիւր զարգացում իր պայմաններէն կը մեկնի: Հայաստան կարող է, Վենեզուելայի մոտեւորները չընկնելով, իր մոտեւոր զարգացնել՝ իր վիճակին համաձայն: Եւ հիմնականը, օրինակի համար, որ Չաւեսը կ'ըսէ, այն է, որ «Մենք Վենեզուելան կը շինենք Վենեզուելայի բարեկեցիկ ազգութիւններու արժէքներուն վրայ՝ տեղացի բնիկները, եւրոպացիները եւ ամերիկացի ժառանգորդները»:

Իսկ Հայաստանը պիտի գարգացնէ մոտեւոր մը, որ հայ ժողովուրդի արժէքներու մէջ մտած է: Եւ հայ ժողովուրդի արժէքներու մէջ յափշտակութիւն չկայ, թալան չկայ, մարդկայնութիւն կայ, մարդկային հասարակարգ ստեղծել կայ: Այդ խառնաշփոթ կացութեան մէջ՝ 91-էն վերջ, արկածախնդիրներն է, որ հասան ուժային դիրքերի եւ սկսան աս երկիրը ղեկավարել: Հայաստանի ներկայ՝ 17-ամեայ ուղղութիւնը, Հայաստանի ժողովուրդին ուզածը չէ: Հայաստանի ժողովուրդը ուրիշ բան կ'ակնկալէր եւ ուրիշ բան տեսաւ:

Իսկ հիմա ի՞նչ է ակնկալում Հայաստանի ժողովուրդը:

Իրենք կ'ուզեն գործ, տանելի

կեանք, մարդկային բաներ, եւ տակաւին մեր ժողովուրդին մէջ չէ զարգացած նոյնիսկ ընկերային արդարութեան գաղափարը: Սոցիալական արդարութիւնը կարեւոր է եւ հարստութեան վերաբաշխում կ'ենթադրէ, որ աղքատին, տարիքովներուն պէտք է նայիլ, ոչ թէ երեսին վրայ ձգել, հիւանդներուն պէտք է դարմանել: Ձրի դարմանումը կամ պետական ֆինանսաւորումով դարմանումը կարեւոր է: Մենք Քանատային մէջ ունինք ատի, կապիտալիստ ըլլալով հանդերձ: Ուսումը պէտք է ձրի ըլլայ, եւ համալսարանի մակարդակին ալ այնպիսի գումարներով, որ կարենան ուսանողները օգտուիլ:

Արեւմտեան Եւրոպայի, Քանատայի, Ամերիկայի մէջ պատահածները ցոյց կու տան, որ դեմոկրատիայի համար պայքարը մշտական է: Այսինքն՝ ժողովուրդին ծոցէն եկած կազմակերպութիւնները միշտ պիտի պայքարին սերունդներէ սերունդ: Այսօր ատիկա ձեռք բերինք, այս բանը շահեցանք, այս իրաւունքը ունեցանք, չի նշանակել հանգիստ նստիլ, պառկիլ (ինչ որ պատահեցաւ Արեւմուտքին մէջ), որովհետեւ օր մը կրնան մեզի գալ, ըսել, որ «Ատ ձեզի տրուածը իրաւունք չէր. մենք բարեհաճեցանք ձեզի տալ»:

Մենք իրականութեան մէջ ատոնք պէտք է իրաւունք ըլլան: Եւ նոյնիսկ եթէ իշխողները ժողովուրդէն եկած են, կրնան սխալիլ: Ուրեմն՝ միշտ պէտք է ժողովուրդը կազմակերպուած ըլլայ:

Ձեր գնահատմամբ՝ շարքային հայաստանցի ուզում է մշտապես պայքարել, թէ՞ ուզում է հանգիստ կեանքով ապրել:

Ժողովուրդը այսօր պատիւ վիճակի մէջ մասամբ, եւ յոյս չունին, թէ եկողները կրնան սրբազրել կացութիւնը: Եթէ վարեն ժողովուրդային շարժում մը գայ, որը ունենայ իր ղեկավարութիւնը, ղեկավարութիւն մը, որ ձեռքբերը մաքուր է, որուն կարելի է վստահիլ եւ որոնք պիտի չընեն նոյնը, ինչ որ միւսները կ'ընեն, կը կարծեմ, որ ժողովուրդը կը սկսի այդ ուղղութեամբ շարժուել, որովհետեւ այս ժողովուրդը անպայման կ'ուզէ, որ բարեխառն ըլլայ: Բայց պէտք է հասկանալ, որ այս բարեխառնը չի կրնար ըլլալ պատիւ նստելով, կամ սպասէ, որ աս սիստեմը բարեխառնի, ու աս սիստեմը պիտի չբարեխառնի, որովհետեւ անոնք, որոնք այս սիստեմէն կ'օգտուին, չեն ուզէր բարեխառնում. իրենց նպաստաւոր է:

Այսինքն՝ ժողովուրդին ուղղակի կազմակերպող է պէտք:

Կազմակերպող է պէտք: Նախ՝ պէտք է միտքեր ըլլան, վիճաբանութիւններ ըլլան, բանավէճեր ըլլան, մարդիկ քով-քովի գան, թեր ու դէմ արտայայտուին: Ժամանակ կ'առնէ ասիկա: Այդ արտայայտութիւններէն պիտի տեսնաք, որ ժամանակի ընթացքին միտքերը պիտի բիւրեղանան, յստականան: Անկէ վերջ կ'անցնի գործնականին:

BUSINESS FOR SALE
ՕԱԽՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՐԱՏՈՒՆ
Armenian Grocery, Meat & Deli for sale. \$120,000. 1,800 sq ft in the heart of Burbank. Steady sales, chiller, meat counter & equipment alone is worth the asking price. Owner also selling Water & Ice store in Glendale – coffee, teas, soda, snacks. Asking \$40,000 - makes \$2,000 a month profit.
Contact Mary Sanchez - 310-539-8300

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՎՐԱՅ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱԾ ԱՆԺԽՏԵԼԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐԱՅՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐԲԻՈՅ ԵՒ ԻՍՐԱՅԵԼԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Շարունակում է 8-էն

կը պանծացնեն սուտը: Անոնք կը ստեն քաղաքական շահերէ տարուած: Կը ստեն յանուն «politics»ի: «Քաղաքականութիւնը կամ politics-ը անգլիացի անուանի վարչապետ մը աչքայէս կը սահմանէ. «Փոլիթիքսը, կ'ըսէ ան, սուտ խօսիլ է Անգլիայէն դուրս, ի շահ եւ պաշտպանութիւն Անգլիոյ»:

Իսրայէլի իշխանութիւնները որպէս «փոլիթիքս» սուտ կը խօսին թէ «Իսրայէլէն ներս» եւ թէ «Իսրայէլէն դուրս», եւ ոչ թէ «ի շահ եւ ի պաշտպանութիւն Իսրայէլի», այլ ի շահ եւ ի պաշտպանութիւն Թուրքիոյ: Այս մէկը՝ երբեք թոյլատրելի չէ, եւ ոչ ալ ներելի:

Մեր իղձն է կոչ ընել Իսրայէլի իշխանութեանց եւ իրենց ղեկավար դէմքերուն՝ ընդմիջտ հրաժարիլ պաշտպանել անճիշդ կամ սուտը:

Կը յիշեցնենք իրենց մեծանուն մարգարէին՝ Մովսէսի հետեւեալ ամենէն կարեւոր պատուիրանը՝ «Մի ստեր», ոչ Իսրայէլէն ներս եւ ոչ ալ Իսրայէլէն դուրս:

ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԱՅԼԱՄԵՐԺ ԴԻՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Բացի թուրք իշխանութեանց եւ Իսրայէլեան ղեկավարներու միջեւ երկար տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող քաղաքական եւ Ազգային շահերէ եւ կապերէ, Իսրայէլեան վերին մարմիններու նպատակն է նաեւ աշխարհի համար մեծ եւ փոքր պետութեանց հաւատարմանը՝ որ ցեղասպանութեան միակ եւ գլխաւոր գոհերը հրեաները եղած են, եւ միայն հրեաներն են արժանի լայն հատուցումներու եւ ոչ թէ այլ ժողովուրդներ եւ ազգեր:

Առաջին անգամ չէ որ ականատես կ'ըլլանք Իսրայէլեան վերին մարմիններու կատարած այս անիրաւ ուրացումներուն, այդ պատճառով ալ անհրաժեշտ նկատեցինք վաւերական փաստերով ապացուցանել, որ ցեղասպանութեան գոհերը շատ աւելի ճշմարտօրէն հայերը եղան, քան թէ հրեաները:

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոս կը ներկայացնենք պատմական անուրանալի ապացոյցներ, որ Գերմանիոյ կողմէ հրեաներուն վրայ կատարուած բնաջնջման կամ ողջակիզման արարքները թիւերու համեմատութեամբ եւ բռնարարներով շատ աւելի նուազ եղած են քան թուրք կառավարութեան գործադրած ցեղասպանական վայրագ արարքները հայ ժողովուրդը վրայ: Հոս կը ներկայացնենք պատ-

մական շարք մը իրողութիւններ եւ տարբերութիւններ:

1934 թուին, երբ Հիթլէր տիրացաւ Գերմանիոյ իշխանութեան, տարիէ մը իսկ յայտնի ըրաւ իր ժխտական կեցուածքը Գերմանիա բնակող հրեաներու դէմ:

Ան 1935 թուին ազդարարեց հրեաներուն հեռանալ Գերմանիայէն եւ Աւստրիայէն: Երեք տարի ժամանակ տուաւ անոնց, որպէսզի վաճառեն իրենց տուններն ու կալուածները եւ իրենց նիւթական հարստութիւններով հեռանան երկրէն: Գերմանիոյ իշխանութիւնները պատրաստակամ եղան նոյնիսկ օրուան սակով գնելու հրեաներուն տուններն ու կալուածները՝ եթէ անոնք դժուարութիւն ունենային վաճառելու զանոնք:

Այդ տարիներուն է որ շուրջ 450,000 հրեաներ ներգաղթեցին Ամերիկա: Մաս մը հրեաներ չհեռացան սակայն Գերմանիայէն եւ Աւստրիայէն, անոնք է որ դժբախտաբար գորհ դարձան բնաջնջման եւ ողջակիզման:

Հրեաները առիթ ունեցան խուսափելու բնաջնջումէ եւ ցեղասպանութենէ: Բայց ոչ՝ հայերը:

Հայ ժողովուրդի բնաջնջման ծրագիրը թուրք իթիթիստականները կատարեցին գաղտնօրէն եւ դաւադրաբար:

Անոնք առ երես «Հաւասարութիւն» եւ «Եղբայրութիւն»ներ բողոքեցին, եւ երբ ամբողջ աշխարհ պատերազմի մղձաւանջի մէջ էր, հայ ժողովուրդը իրենց տուններէն բռնօրէն հանեցին եւ տարագրեցին անապատները: Թուրք գինեակներ այդ անմեղ եւ անպաշտպան հայերը անխնայ կոտորեցին, սպանեցին կամ գետամոյճ ըրին ամենէն անմարդկային անգթութիւններով:

Հայ ժողովուրդը տեսաւ ցեղասպանութեան ամենէն դաժանն ու ամենէն աներեւակայելին:

Եւ սայկան կայ դեռ շատ աւելի կարեւոր տարբերութիւն մը:

Հրեաները բնակութիւն հաստատած էին Գերմանիոյ մէջ, որ իրենց հայրենիքը չէր:

Հայերը կ'ապրէին իրենց պայնական հայրենիքին մէջ՝ ուր ապրէր էին աւելի քան երեք հազար տարիներ: Թուրքերն է որ եկուոր էին: Անոնք բռնութեամբ եկեր եւ տիրացեր էին իշխանութեան:

Վերոյիշեալ պատմական եւ վաւերական վկայութիւնները կը հաստատեն՝ որ հայ ժողովուրդի վրայ գործադրուած ցեղասպանութիւնը շատ աւելի խստագոյն էր եւ անագորոյն, քան հրեաներունը:

(Շարունակելի 1)

ՄԱՐՏԻ 1-ԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԵԼ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Շարունակում է 13-էն

եղել, ինչն էլ արուել է: ՈՉ թիւ 1001 գործաւար յատուկ նշանակութեան ջոկատի հրամանատարի տեղակալ Մարտիրոս Դաւրանեանն, իր հերթին, բաւականին հետաքրքիր բացայայտում է արել, ինչը բացատրում է, թէ ինչու են ՈՉ գինուորներն առաջին գծում տեղակայուել, եւ ինչու են ցուցարարների վրայ կազմակերպուած գրոհը նրանցով սկսել: «Ես ոչ մի դէպքում չէի կանխատեսում, որ այդ մարդիկ այրուող շէր կը գցէին հայ գինուորի վրայ, որ երեխաների վրայ ձեռք կը բարձրացնեն», - Փաստահաւաքում ասել է Դաւրանեանը: Մի կողմ թողնենք, որ ցուցարարները գինուորների վրայ վառուող շէր չեն գցել. Մարտի 1-ի կադրերում յատակ երեւում է, որ այսպէս կոչուած «մոլոտովեան կոկտէյլի» շէրը գործի ճանապարհին են պայթում՝ կարծես յատուկ այնպէս է արուում, որ գինուորները պարզապէս առաջ չգնան եւ հրաժարուեն այդ մտքից: Այս դէպքում, սակայն, ուշագրաւ է, որ կրկին անգամ ապացուցում է, որ գինուորներին առաջին գծում տեղակայելը պատահական չի եղել: Այդպիսով, հրաման տուողները գործնականում մէկ խնդիր են լուծել, երբ գինուորներին հրահանգել են գրոհել. արդիւնքում, հնարաւոր բախումների դէպքում երկուստեք տուժողները գործնականում միեւնոյնն կողմից էին լինելու՝ ՀՀ քաղաքացիները, գինուորները եւ նրանց ծնողները, քոյրերը եւ եղբայրները:

Ի դէպ, վերը թուարկուած անձանց՝ Փաստահաւաքում պատմածների մէջ մէկ ուշագրաւ տուեալ եւս կա, որ մինչեւ այս պաշտօնական հաստատում չէր ստացել:

ԹՈՒՐԲԻԱ ԵՒ ՆԱՅԻԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Շարունակում է 14-էն

Իշխող ԱԲ կուսակցութեան ղեկավարը՝ Թուրքիոյ Հանրապետութեան այժմու վարչապետը, նախորդ կառավարութիւններուն գործունէութիւնը պախարակելու միտումով, Մայիս 23-ին ըսաւ. «Փաշխատական մտածողութեան արդիւնք էր անցեալին իրագործուած Թուրքիայէն վտարումը բոլոր անոնց, որոնք տարբեր ազգային պատկանելիութիւն ունէին: Տարիներ շարունակ մեր երկրէն ներս որոշ դէպքեր արձանագրուեցան: Շահաւոր ելա՞նք արդեօք այդ

ՈՉ տարբեր գործաւար ներկայացնող բարձրաստիճան սպաները պնդել են, որ ոստիկանութեան գորքերի գինուորները եղել են իրենց կապտամոխրագոյնն «կամուֆլյաժներով»: Մա այն դէպքում, երբ ՀՀ իշխանութիւնները մինչեւ օրս փորձում են Հայաստանի հանրութեանը համոզել, որ Մարտի 1-ի կէսօրին ՀՀ կառավարութեան շէնքի մօտ կայանուած աւտոմեքենաների գինուորականները, որոնք Պաշտպանութեան նախարարութեան գինուորականների համագգեստն են կրել, նոյնպէս ոստիկանութեան գորքերի գինձառայողներ են եղել: Բայց, ինչպէս արդէն նշեցինք, ՈՉ հրամանատարութիւնը, հաւանաբար այս մասին մոռանալով, հաստատում է այն փաստը, որ իրենց գինուորները իրենց յատուկ համագգեստով են եղել: Կարծում ենք, որ ի վերջոյ՝ յայտնի կը դառնայ նաեւ, թէ ովքեր են եղել կառավարութեան շէնքի մօտ կայանուած աւտոմեքենաներում նստած գինուորականները: Ի վերջոյ, ՀՀ ՊՆ ղեկավարութիւնը ստիպուած է լինելու պատասխանել այն հարցին, թէ ում հրահանգով են ՀՀ ՊՆ գինուած ուժերը հանուել սեփական ժողովրդի դէմ, եւ ով է եղել այդ գինուած յեղաշրջման կազմակերպիչը:

ՈՉ թիւ 1001 գործաւար յատուկ նշանակութեան ջոկատի հրամանատար Բագրատ Խաչատրեանը Փաստահաւաքում յայտնել է, որ իր ղեկավարած ջոկատի անդամներից 19-ը գինուած են եղել ինքնաձիգերով (նրանցից 3-ի մօտ եղել են անզնդակ փամփուշտներ), իսկ մնացած 16-ը կրակել են լուսածիրային, այսինքն՝ մարտական փամփուշտներով:

ՎԱՀԱԳԻ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

քաղաքականութենէն»:

Եթէ փոքրամասնութիւններուն՝ «տարբեր ազգային պատկանելիութիւն» ունեցողներուն երկրէն վտարումը «Փաշխատական մտածողութեան արդիւնք էր», հապա հայոց ջարդը՝ Յեղասպանութիւնը ո՞ր մտածողութեան արդիւնք էր:

Թող այսօրուայ թուրքերը ընտելանան այս գաղափարին, թէ իրենք ալ նացի անցեալ մը ունեցած են, ու այդ նացիական գաղափարախօսութենէն տակաւին չեն կրցած ձերբազատուիլ:

«ԼՈՒՍԱՐԱՅ»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Ողբացեալ ՎԱՐԴԻՎԱՌ ՀՈՓՈՒՐԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Sahara ճաշարանի տէրեր Գրիգորեան եղբայրներ ցաւակցութիւն կը յայտնեն ողբացեալի հարազատներուն ու ընտանեկան պարագաներուն, յատկապէս քրոջ Տիկ. Արփի Հոփուրեանին: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԲԵԱՆԻ մահուան տխուր առթիւ փոխան ծաղկեպսակի «Մասիս» շաբաթաթերթին կատարուած են նաեւ հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար թերթի տնօրէնութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ:

- Տէր եւ Տիկ. Յարութ Տէր Դաւիթեան \$100
- Տիար Լեւոն Կալեան \$100
- Տէր եւ Տիկ. Զաւէն Խանճեան \$50

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

presents

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

SUNDAY, SEPTEMBER 20, 2009

VERDUGO PARK, GLENDALE

11:00 AM - 7:00 PM



FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

Live Entertainment
Dance • Arts & Drafts
Food • Kid's Games
Backgammon Tournament

Երգ ու Պար
Արուեստի Գործեր
Փոքրերու Խաղեր
Նարտիի Մրձաշարք
Համադամ Եւաշեր